Много веков назад законодатель древнегреческого города Локры Залевк ввел закон, по которому уличенным в прелюбодеянии определялось страшное наказание - ослепление. Однако очень скоро этот суровый закон обернулся против него самого: сын Залевка был уличен в прелюбодеянии, и ему грозило определенное отцом в подобных случаях наказание. Тогда, чтобы не отступить от закона, Залевк решил отдать собственный глаз за один глаз юности и так спасти его от полной слепоты...

Восхищаясь через тысячелетия мужеству и неукоснительному следованию закона древнего законодателя, отметим с сожалением, что нынешние наши руководители и законодатели всех рангов так же далеки от подобного поведения, как далеко отстоит наше продвинутое время от упомянутых минувших времен. Так что чиновничьи отпрыски и их папаши могут спать спокойно. Нынче для них закон вроде дышла. Куда повернут - туда и выходит. И часто выходит весьма некрасивым образом, так что прямо колет всем глаз. Всем, кроме самого нарушителя закона.

Роберт ОГАНЯН.

145

- Говорят, в лагере умер Мандельштам. Румер довольно громко сказал: - Не шепчите. Он ничего противозаконного не сделал.

Шолохов послал в подарок Сталину книгу, надписав ее: «Товарищу Сталину - М. Шолохов». Ему позвонил разгневанный Поскребышев и сказал, что товарищу Сталину книгу с такой надписью не передаст.

- А что я должен был написать? С кирпичным пролетарским приветом?» - обиженно ответил Шолохов.

Сергей ГУКАСЯН,

по материалам книги Ю. Борева «Сталиниада».

- И фиговый листок по осени опал.
- Он задушил ее. На этот раз - в объятьях.
- И жизнь ушла, бездушно хлопнув дверью.
- Он протянул нам руку помощи. В перчатке.
- Вот было бы смешно влюбиться не на шутку.
- Для трезвых мыслей день тогда был неприемный.
- Все встало на свои места, и только мы еще сидели.
- Подложенную нам свинью мы ели долго, с аппетитом...
- Среды тлетворное влияние продли-

лось аж до ночи четверга.

Яна ДЖАНГИРОВА.

- ◆ Любовь отсутствует всегда по уважительной причине.
 - ◆ Все новое - не успевшее остыть старое.
 - ◆ Споткнулся, упал, очнулся - не гипс, а чистилище.
 - ◆ Попытка протянуть ножки по одежке может иметь ортопедические последствия.
 - ◆ Клятвы напрокат не дают.
 - ◆ Отсутствие ума особенно заметно при попытке с него сойти.
 - ◆ В меру пользуйтесь взаимностью.
- Ара БАГДАСАРЯН.**

- Бесценную любовь надо не оценивать, а просто ценить.
- Воспоминания - это испытание болезнью, которую нельзя запустить.
- «Я тебя...». Как много можно вписать в эти три точки. Сложнее всего - «тоже».
- Готовность проглотить кнут - это результат регулярных побоев пряниками.
- Улыбнуться за спиной легко. Сложнее громко рассмеяться.
- Воскресенье - это день. Недели или жизни - вам решать...

Рубен ПАШИНЯН.

ԳՅՈՒՄՐԻՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ..

Մեկն էլ գնաց...

Տարեմուտի շեմին իմ հին հոգեկից մի ընկերն էլ գնաց Հայաստանից: Գնաց Ֆրանսիա: Նա բանասիրական գիտությունների դոկտոր էր, արձակագիր, մանկավարժական ինստիտուտում հայ գրականության ամբիոնի վարիչ: Դեռ դպրոցական տարիներին իմ մտավորական ավագ ընկեր Հայկազը ինձ համար միշտ եղել է հայ ոգու զինվոր ու պահապան: Նրա մեկնումով (թեկուզ իր ընտանիքին միանալու ծանրակշիռ ու հարգելի պատճառով) այսօրվա մի բուռ Հայաստան-հայրենիքն իմ աչքին հերթական անգամ փոքրացավ-կծկվեց, ու ես չկարողացա գնալ հին ընկերոջս հրաժեշտ տալու... Հիմա ինքս ինձ նորից տալիս եմ այն մաշված հռետորական հարցը, թե ինչո՞ւ և մինչև ե՞րբ պիտի հայը շատ ավելի մեծ թվով ապրի օտար պաղ երկինքների ներքո, քան իր անկախության դարավոր երազանքին հասած Հայաստան երկրում:

Այսօր Հայաստանում տեղի ունեցող ու կատարվող համարյա ամեն ինչը հային հայից հեռացնում, խորթացնում, հային հայի դեմ է տրամադրում... Մեզ ամեն մեկիս մեր մերձավորին, մեր ընկեր-բարեկամին ու հարազատին կապող հոգեկան շաղախը ևս թուլացել, ամեն ոք հագիվ իր հոգսերի, իր ամենօրյա վագրի հետևից ընկած մեկուսացել, մնացել է մեռակ, առավել խոցելի, առավել սխալական: Ամանորի տոնական ու հետտոնական ավելի հանգիստ մի քանի օրերը հրաշալի առիթ են և՛ հոգսերից մի կարծ միջոց վերանալու, և՛ իրար հյուր գնալով՝ մեզ սիրող ու մեզ սրտակից մարդկանց հետ անշտապ, այնքան անհրաժեշտ մարդկային շփումներով քերմանալու, ուժ առնելու: Ինչո՞ւ է չ՛նաև նոր տպավորություններով հարստանալու: Ինձ մինչև այսօր չի լքում այն ուրախացնող, հաճելի տպավորությունը, որ այս հունվարի 7-ին ընտանիքով հյուր լինելով՝ ստացա հին, բարի ժամանակների իմ մի մտերիմ ընկերոջ նոր բնակարանից: Ինձ կիսականան նրանք, ում համար գլխի վերև սեփական ապահով ծածկ ունենալը, տարրական մարդկային պայմաններում ապրելու հնարավորությունը մնում է չիրականացող երազանք: Գյումրու կենտրոնում հառնող «Հույս» նոր մինի-թաղամասում, «Լինսի» 2003 թ. կառույց գեղեցիկ, եռահարկ շենքի երկրորդ հարկում գտնվող բնակարանը, չնայած իր երեք սենյակների ոչ մեծ չափերին, ընդհանուր առմամբ հարմարավետ ու տրամադրող էր իր հատակագծմամբ, ինքնավար քեռուցման ու ջրատաքացման «Լրիստոն» համակարգով, ճաշակով ու մաքուր հարդարմամբ: Այստեղ կարող եմ մարդավալել ու հանգիստ ապրել, եթե, իհարկե, կա նաև դրա երկրորդ անհրաժեշտ պայմանը՝ պատշաճ աշխատանք: Տնտեսապես մի տեսակ դատապարտված Գյումրիում սա մեծամասնության համար վաղուց է դարձել չլուծված հարցերի հարցը՝ իր բոլոր տխուր հետևանքներով: Իսկ ընկերս՝ բարձրակարգ մանկավարժ-մասնագետ, երկարամյա փորձառու ղեկավար, դպրոցի տնօրեն, ակտիվ աշխատանքային տարիքում իր աշխատանքից հանձնարվել գրկվել է երկուսուկես տարի առաջ, երբ «օպերիմալացման» կախարդական փայտիկի մի հարվածով, կառավարության որոշմամբ այս քաղաքում մեկ տասնյակ դպրոց փակվեց... Երբ նույնիսկ այս դեպքում իրեն դուրս թողեցին առանց որևէ իրական անհրաժեշտության ու հիմքի, կամայականորեն, իբր աշխատանքի «նշանակելով» մեկ այլ դպրոցում և այդպես էլ այդ աշխատանքը... չտրամադրելով: Լուրջ պաշտոնատեր մարդիկ գուցե վերջապես ճշտե՞ն իրենց խոսքի ու որոշման արժեքը:

Իմ ընկեր Բաբկեն Մանուկյանը մեծ տոկունությամբ, մեծ հոգու տեր մարդ է՝ 88-ի դեկտեմբերին ապրած անձնական անասելի արհավիրքին ու հաջորդած փորձություններին արժանապատվորեն դիմացած, ինքը մերձավորին հույս և կյանքի ճանապարհի հանող ամուր նեցուկ-հովանի եղած, վերընձուղված... Նա հիմա էլ, փառք Աստծո, ձեռքից եկող բանվորական արհեստը բանեցնում, ընտանիքն ու դեռ երեանուն էլ բժշկական համալսարանի ուսանողուհի գավակ է պահում: Բայց միևնույն է, կյանքի իր ուղին, իր իրավունքը իրենցից խլված է: Սա Հայաստանում ևս մի, ոչ մեկ-երկու մարդու խնդիր է: Իրավական պետություն համարվող մեր երկրում մարդն իր աշխատանքում որևէ պահի ապահովագրված չէ նույնիսկ պետական մեքենայի ոտնձգությունից: Էլ ուր մնաց խոսել մասնավոր գործատուի մասին:

Հրաժեշտ տրոլեյբուսին կամ անպեր մայր գեյր կրանի

Հունվարի երկրորդ տասնօրյակի սկզբներին մի օր գործադու էին արել Գյումրու ներքաղաքային ավտոբուսների վարորդ-սեփականատերերը: Պատճառը մոտավորապես այն էր, որ եթե իրենք մինչ այդ աշխատում էին որպես անհատ ձեռներեցներ, ապա այժմ նրանց պարտադրում էին մտնել մի նորահայտ ՄՊԸ-ի մեջ, որն էլ արդեն օրվա հասույթի իր նոր չափն էր սահմանել: Անգամ եթե ՄՊԸ-ով աշխատելու անցնելը սահմանված կարգ է, նշված դեպքում անհասկանալի էր մնում, թե ինչո՞ւ պիտի երթուղիները սպասարկողներն իրենք մտնեին ուրիշի «հովանու» տակ, իրենց գլխին մեկ էլ նոր «տերեր» պահեին, երբ մանավանդ կա քաղաքի արդեն երկար ամիսներ պարապուրդի մատնեղված ավտոբուսային ձեռնարկությունը՝ աճուրդով գնված հենց քաղաքապետարանի կողմից:

Եթե ասվածը մարդկանց գոնե մեկ-երկու խմբի անմիջական շահերի խնդիր է, ինչը նույնպես քիչ կարևոր չէ, ապա այն, ինչ հետամանորյա առաջին իսկ օրերից սկսեց կատարվել՝ կապված Գյումրու քաղաքային տրանսպորտի երկրորդ «ավանդական» ոլորտի հետ, ուղղակի պայեցուցիչ էր իր շուկայական ողջ այլաճանակ դիմագծով: Ապամոնտաժում էին քաղաքի տրոլեյբուսի էլեկտրագծերը... Ում որոշմամբ, ինչու՞ ոչ ոք չգիտեր, ում ավերիչ ձեռքն էր այս անգամ արդեն դրանց հասել՝ նույնպես: Եղածը ասեղ չէր, բայց ոչ մի պաշտոնական ու անպաշտոն անձ որևէ մեկին, հետաքրքրված լրատվամիջոցներին (իմա՝ հասարակությանը) որևէ տեղեկություն, բացատրություն չէր տալիս. ամեն ինչ կատարվում էր դավադիր լռությամբ, անձայն և զարմանալիորեն արագ, չար երագի պես: Եվ այսօր քաղաքն արդեն կանգնած է կատարված փաստի առաջ. չկան տրոլեյբուսի գծեր, ուրեմն գործնականում չկա և երբևէ նորից էլեկտրատրանսպորտ ունենալու հնարավորություն:

Պարզվում է՝ նման բան կարող էր կատարվել մի դատավորի, տնտեսական դատարանի մի որոշմամբ: Կոնսակտային ցանցի պղնձե էլեկտրալարերը լուծարվող տրոլեյբուսային վարչության պարտքերի դիմաց հանել-վաճառելու տրամաբանությամբ: Ակամա մտածում ես՝ ի՞նչ կլինեի, եթե համանման վիճակում հայտնված լինեին, օրինակ, էլցանցը, ջրմուղը... Ահա, թերևս, շուկայի թելադրած իրավական օրենքի և պարզ բանականության հակադրության մի վառ օրինակ: Այդ ինչու՞, ինչ բարոյական իրավունքով պիտի վերջին տարիներին մեթոդաբար ինքնամարման հասցված տրոլեյբուսային վարչությունը այսօր լուծարվել-«գնալով» (կյանքը դրանով հո չվերջացավ) իր հետ տաներ և քաղաքի՝ ունեցվածքը... Այն էլ՝ առանց նույնիսկ քաղաքային իշխանության կամքը հարցնելու:

Այսօր մեր երկրում այն ամենը, ինչից կարելի է անմիջական օգուտ ու շահ կորզել՝ կարող է հազար տեր ունենալ, իսկ ինչը ստեղծելու և մանավանդ պահպանելու է՝ հաճախ տեր չունի: Այս օրը ցերեկով կատարված արտառոց անիրավությունը կանխող կամ կանգնեցնող պետական տե՛րը չկար: Եվ սա է ամենից ցավալին:

Իսկ ասում են նաև, թե այդ ավելի քան 60 կիլոմետր ընդհանուր երկարությամբ պղնձալարերի արժեքը մի քանի անգամ գերազանցում է տրոլեյբուսային վարչության բոլոր պարտքերը...

Եկողին ո՞վ կասի՝ բարո՞վ եկար

Թող բարձրագույն չհնչի, բայց մեր երկիր-հայրենիքը երկիր կլինի ու ապագա կունենա, երբ իր պահպանող ու ստեղծող տերերն ավելի շատ լինեն, քան միակողմանի ու անվերջ կորզող-տանողները: Այդ ստեղծածը լինի մի լուցկի, մի շենք, թե մի մնայուն հոգևոր արժեք: Ես այս տարվա սկզբներին մի օր խանութից տասը տուփ փաթեթավորմամբ լուցկի առա և այնքան հաճելի անակնկալից զարմացա. լուցկին հայկական էր՝ «Գրանդ տոբակո»: Ես նախկինում երբեք հայկական լուցկի չէի տեսել: Եվ այն էլ՝ բոլորից լավն ու որակով: Շնորհակալություն և հարգանք

«Գրանդ» հոլդինգին այն ամենի համար, ինչ բոլոր այս տարիներին արեց և շարունակում է անել: Նա ամեն ինչից բացի նաև վերականգնեց այսօր մոռացված ու արհամարհված «աշխատավոր» հասկացությունը և հայ աշխատավորի հպարտությունը, ցույց տվեց, որ երկիր կառուցում են ոչ թե առնել-ծախելով ու խաբխբելով, այլ աշխատել-ստեղծելով, հայավարի արարելով: Այ սա քանի դեռ Հայաստանում նորից չի դարձել իշխող հոգեբանություն և պետական քաղաքականություն, քանի դեռ այստեղ մարդն իր հողի վրա իրեն պաշտպանված ու հարկավոր տեր չի զգում, հայ արարող ձեռքերը պիտի շարունակեն գնալ ու այլոց ծրագր վառ պահել...

Իսկ զննածոներից ինչքան-ինչքանը հոգնել են օտարին ծառայելու և կցանկանալին վերադառնալ: Ինչպես, ահա, իմ մեկ այլ,

մանկության ընկեր Մայիս Ումրշատյանը՝ 30 տարի Ռուսաստանում անցկացրած, այնտեղ որոշակի դիրք ու հեղինակություն վաստակած, բայց և հատկապես երկրաշարժից հետո մի ուրը միշտ այստեղ: Ինքը դիպլոմավոր շինարար-մասնագետ է, հիմնարկներ է ղեկավարել, այժմ էլ տնօրեն է ընդունված, հարգված, շրջապատի տեր, բայց ասում է՝ մեկ է, այնտեղ քեզ ինչ-որ մի պահի էլի խորթ, օտար աչքով են նայում: Հիմա երկար արձակուրդ վերցրել, կնոջն առել եկել է հարազատ Գյումրի և ուզում է հիմնական մնալ, եթե կարողանա մի գործի մտնել: Պատրաստ է ձեռքից եկող ամեն աշխատանքի, սկսած վարորդությունից... Կա՞ այն պետական ու տնտեսական ղեկավարը, որ կուրախանա և ընդառաջ քայլ կանի հայրենի տուն վերադարձողին:

Գեղամ ՄԿՐՏՅԱՆ, Գյումրի

ԼԵԶՈՒՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Է

Մայրենի լեզուն այս տարվանից իբրև տոն նշվում է նաև Հայաստանում: Այն մեր տոնացույցի պետական տոներից է այլև: Շատ ուրախ եմ, որ աշխարհով մեկ նշվում է մայրենիի տոնը, չէ՞ որ մենք էլ աշխարհի մի մասն ենք: Մեր լեզուն մեր ճակատագիրն է կրում և շատ է տառապել ու արհամարհվել: Այս տոնը մայրենի լեզվի արժևորման, լեզվի նշանակությունը շեշտելու առումով կարևոր է: Թշնամիներ այսօր էլ շատ ունենք, մեր լեզվին հարվածել են ծախից, աջից: Ես դրսում եմ ապրել և տեսել եմ հայերենի վիճակը դրսում: Էլ չեմ խոսում այն մասին, որ մերսում ևս մեր վերաբերմունքը լեզվի նկատմամբ սարսափելի է եղել: Չենք սիրել, չենք հարգել մեր լեզուն: Հայերենը մեծ հնարավորություններ ունի, ազնվական լեզու է: Երբ թարգմանում են մեր գործերը, աղքատանում են նրանք, ռուսերենը չի կարողանում դիմանալ մեր լեզվի հնարավորություններին: Այսօր Ռուսաստանում խայտառակ ռուսերենով են խոսում: Ինձ թվում է՝ հայերենի նկատմամբ աղմուկը իզուր է, որովհետև ամեն ինչ համեմատության մեջ պիտի դիտարկել: Ես համեմատում եմ 1945թ. երևանի փողոցի լեզուն այսօրվա փողոցի լեզվի հետ: Սար ու ձորի տարբերություն կա: Այսօր փողոցում խոսում են շատ լավ հայերենով: Մենք մաքսիմալիստ ենք, ուզում ենք փողոցում խոսեն գրական լեզվով: Չէ, եղբայր, բարբառ են օգտագործում, քաղաքային ֆուկլոր, ժարգոն նաև, բայց տազնապելու հարկ չկա: Իհարկե, լավ է, թող ասեն, թող ավելի մեծ լինի ուշադրությունը լեզվի հանդեպ: Իսկ մեր հեռուստատեսության լեզուն լուրջ սրբագրումների կարիք ունի: Այն ուսուցողական պիտի լինի, ամեն ինչից գատ, դպրոց է, դաստիարակում է: Իսկ Աժ-ում ուզում են հայերեն խոսել, այդ ցանկությունը կա, պատգամավորները մեկ-մեկ բառեր են օգտագործում, ասել կուզեն՝ մենք էլ գիտենք հնամենի այդ բառերը: Երևանում ամեն քայլափոխի կարելի է հանդիպել գովազդներ ու ցուցանակներ, որտեղ հայերենը կամ բացակա է, կամ ստորադասված է: Դա մեր օտարամոլության հետևանքն է: Կամ՝ երբեմն ռեստորանի, առևտրի օբյեկտի անունների ենք հանդիպում, որոնցից օտարամոլության հետ գավառամոլություն է բուրում: «Վալենտինա», «Մանիթեն», «Լաս Վեգաս», «Մուլեն Ռուժ» այս անուններն իրոք գավառամոլության արտահայտություն են: Այսինքն՝ մեր մեջ ընդօրինակելու մարմաջ կա: Ոչ միայն գովազդներն ու ցուցանակներն են այդ մասին վկայում, մեր կենցաղն էլ ընդօրինակում ենք մենք: Այսինքն՝ դեռ թույլ ենք, դեռ չենք կարող մեզ ներկայացնել: Մենք չունենք պետական մշակույթ: Չունենք կուլտուրա ասվածք: Տեսե՛ք՝ մեր հա-

զուստի մեջ էլ հայկական ոչինչ չկա: Այս առումով էլ զուցե հետամնաց ենք, բայց այս հարցերը լուծելի են: Այսօր ավելի զլրբալ հարցեր ունենք՝ տարածքների, Ղարաբաղի, պետականության հարցերը, որոնք պիտի լուծվեն: Կամ՝ գազի, ճանապարհների հարց ունենք, որոնք առավել առաջնահերթ են: Մշակույթը թատրոնը, կինոն առանց գազի և ճանապարհների գոյություն ունենալ չեն կարող: Մշակույթը պետական մշակույթի բաղադրիչն է: Պիտի պետություն ունենանք, որ մնացածը ունենանք: Մենք այսօր խնդիրներ ունենք լուծելու, առաջին անգամ պատմության մեջ այս խնդիրները լուծել է պետք:

Մեկ այլ կարևոր խնդրի մասին կուզեի խոսենք: Խոսքը դասական ուղղագրությանն անցնելու մասին է: Մարդիկ, ովքեր պետության ջատագովներ են և միշտ խոսում են պետության մասին, հակառակ բան չպիտի ասեն: Կա ժամանակի հասկացություն, մենք հիմա հո չենք վերադառնա գրաբարին: Խնդրեմ, մերոնք հրատարակել են Նարեկացի, ավելի ճիշտ՝ ընդօրինակել են, ու են չեմ կարող կարդալ: Գրաբար է և ձեռագիր, բայց անընթեռնելի: Այսպես ժամանակին կարդացել են: Հիմա չի կարդացվում: ...Պետություն ասելով՝ նկատի ունեն մայրավա մեր վիճակը: Մեր լեզուն, որ ճանապարհ է անցել: Արժանի երևույթը պատահական չէր: Արժանից հետո Րաֆֆին մշակեց լեզուն, Շիրվանզադեն եկավ, մարդիկ, ովքեր, եթե անգամ գրական արժեքներ էլ չստեղծեին, լեզուն էին մշակում: Ստեղծեցին գրական հայերեն: Մեր լեզուն այսօր հնարավորություն ունի կուլ տալու, կլանելու, հարստացնելու գրական հայերենը: Մեր լեզուն ողնաշարն է: Գրաբարյան բառեր մտան, չէ՞, լեզվի մեջ: Այսօր «քանզի» ու «զի» են ասում, «արդ» և «ախավասիկ»: 50 տարի առաջ «քանզի» բառը չկար, «որովհետև» էինք ասում միայն: Մեր լեզուն, մեր այսօրվա հայերենն իր ուղղագրությամբ պետություն է, մեր հիմքն է սա, և այս հիմքի վրա պիտի արվեն մնացած ամեն բաները: Դեմ չեմ գրաբարյան հայերենին, այն աստվածային լեզու է, մեր ազնվականության արտահայտությունը, որը կորցրինք: Իսկ ուղղագրության մասին Լևոն Հախվերդյանը ճիշտ էր ասում՝ մենք անգրագետ կղաճանք: Ի՞նչ վատ է մեր ուղղագրությունը: Սրանք ֆոկլուսներ են: Մենք հասկանում ենք արևմտահայերենը, արևմտահայերը՝ կարդում և հասկանում են արևելահայ գրական լեզուն: Սփյուռքում այսօր Հայաստանից գնացած հայերն են, իսկ սփյուռքահայերից քչերն են մնացել: Երկու միլիոն հայություն որտեղի՞ց Սփյուռքում:

Աղասի ԱՅՎԱԾՅԱՆ


ՀԱՅԵՐԵՆԸ 50 ԼԵԶՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ

Իսկ ադրբեջաներենը ընդհանրապես չկա

Մայրենի լեզվի միջազգային օրվա առթիվ ՅՈՒՆԵՍԿՕ-ն հրապարակել է աշխարհի 50 լեզուների ցուցակը, որոնցով ամենաշատ թարգմանություններն են արվում: Հայաստանն այդ ցուցակում զբաղեցնում է 50-րդ տեղը: Ամենաշատ թարգմանություններ հրա-

տարակվում են անգլերենով, ֆրանսերենով, գերմաներենով, ռուսերենով և իտալերենով: Վրացերենը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցակում 46-րդ տեղում է, թուրքերենը՝ 38-րդ: Ադրբեջաներենը այդ ցուցակում ընդգրկված չէ:

ՄԱՇՏՈՑՅԱՆ ՏԱՐԵԼԻՅՆ ՀԱՄԱԼՐՎԵՅ ԵՎ ՍՄԵԿ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ



2005թ. դեկտեմբերին, գրեթե միաժամանակ, Նյու Յորքում և Երևանում լույս տեսան հայոց գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված 2 գեղազարդ ժողովածուներ, որոնց հեղինակը գեղագետ, մշակութային մեկնաբան Լևոն Լաճիկյանն է: Դրանք երկուսն էլ, որոշ տարբերություններով հանդերձ, ընդգրկում են հայ դասականների՝ բանաստեղծների ու գրողների ստեղծագործություններ, չափածո ու արձակ ընտիր էջեր, ինչպես նաև հայ ու օտար մեծերի ասույթներ ոսկեդեմիկ հայերենի վերաբերյալ:

Նյույորքյան հրատարակությունը, որ կոչվում է «Հրաշալի այբուբենը» (The Wonderful Alphabet), լույս աշխարհ եկավ Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդարանի նախաձեռնությամբ և հովանավորությամբ:

Ժողովածուներում տեղ են գտել թե՛ արևելահայ ու արևմտահայ (եղիշե Չարենց, Վահան Տերյան, Սիամանթո, Հովհաննես Շիրազ, Պարույր Սևակ, Սիլվա Կապուտիկյան և այլք), թե՛ սփյուռքահայ (Վահան Թեքեյան, Մուշեղ Իշխան, Դև, Հակոբ Գույումճյան) բանաստեղծների գործեր: Աննախաղեպն այն է, որ դրանցում առաջին անգամ մեկտեղված են հատվածներ անցյալի ու ներկա հայ պատմիչների (Կորյուն, Մովսես Խորենացի, Լեո) և գրողների ու գիտնականների (Գրիգոր Չոխրապ, Ինտրա, Թեոդիկ, Մանուկ Աբեղյան, Հրաչյա Աճառյան, Ներսես Ալիճյան) երկասիրություններից՝ նվիրված մեսրոպյան գյուտին և հայոց այբուբենի առանձնահատկություններին:

Ուշագրավը նաև այն է, որ նյույորքյան հրատարակությունը երկլեզու է. բոլոր նյութերն ամխտիր թարգմանված են անգլերեն՝ դուրացնելով դրանց ըմբռնումը օտարախոս հայերի և օտարազգիների կողմից: Ինչ վե-

րաբերում է երևանյան հրատարակությանը, ապա այն կրում է «Ներքող մայրենիին» վերնագիրը և նախատեսված է հանրակրթական դպրոցների աշակերտության և հայոց լեզվի ու գրականության ուսուցիչների, ուսանողների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակների համար: Երկու ժողովածուներն էլ, ինչպես դրանց առաջաբանում գրում է կազմող հեղինակ Լևոն Լաճիկյանը, նպատակ ունեն «վերահաստատելու մեր սերն ու հավատարմությունը հայ լեզվի նկատմամբ: Լեզու, որ դարեր ի վեր սրբաբոցել ենք՝ կոչելով այն «Մայրենի» և ԱՅԲ-ԲԵՆ-ԳԻՄ-ն արտաբերելով նախ և առաջ որպես ազգային հզոր ու հարատև երգ»:

Այս աշխատությունը նորություն է իր ուսուցողական և ճանաչողական նշանակությամբ ու հնարավորություն է ընձեռում ևս մեկ անգամ վերարժուրել հայերենը և դրանով ստեղծված մեր դարավոր մշակույթը:

Հրատարակված լինելով ճաշակով և ներքին բովանդակությանը համահունչ՝ մեր ոսկեդեմիկ մայրենիին նվիրված այս գրքերը լավագույն նվերը կարող են լինել մայրության ու գեղեցկության միամայակին:

Լևոն ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԻՏԱԿԸ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՆԱԶՄԱՆ ԻՏԱԼԱՅԻ ՉԱՏԱԳՈՎԸ



Ձիովանի Գուայտան աստվածաբան է: Նա մոտ 20 տարի ուսումնասիրում է արևելյան ուղղափառ եկե-

ղեցիները, նրանց սրբերի մասին հանրագիտարանի ստեղծման ղեկավարն է և համահեղինակներից մեկը: Վերջին տարիներին ուսումնասիրել է Հայ առաքելական եկեղեցու պատմությունը սկզբից մինչև մեր օրերը և, իր հավաստմամբ, կարողացել է Հայ առաքելական եկեղեցու մասին այն ամենը, ինչ գտել է: Պարզվում է, որ «այդ ամենը» պատկառելի ծավալ է, քանի որ նա կարողանում է պարզ և մատչելի /ոչ՝ պարզունակ/ լեզվով գրքեր գրել, ինչպես պարզ հավատացյալների և կրոնով հետաքրքրվողների, այնպես էլ աստվածաբանների համար: Նա նույնիսկ ճշտությամբ չգիտի, թե որքան տպաքանակով են լույս տեսնում իր գրքերը: Ի դեպ, դրանց մի մասը մի քանի լեզուներով թարգմանում է ինքը: Նո-

յեմբերին Ջ. Գուայտան Հայաստանում էր: Եկել էր ներկայացնելու իր վերջին, առայժմ միայն ռուսալեզու գիրքը՝ «Ծիչ Արարատից. Արմին Վեզները և հայերի ցեղասպանությունը», որը հեղինակի տուրքն է մեծ եղեռնի 90-ամյա տարելիցին: Գիրքը ամենայն մանրամասնությամբ անդրադառնում է գերմանացի մեծ հայասերի գործունեությանը, լուսանկարներին ու նամակներին, ընդ որում դրանց մեծ մասը առաջին անգամ են հրատարակվում ռուսերենով: Ուշագրավ է նաև գեղադիր գրքի առաջաբանը, որտեղ հեղինակը կարևորում է ցեղասպանության ճանաչումը՝ որպես համամարդկային նշանակության երևույթ: Գիրքը նվիրված է Բեսլանի դպրոցում 2004-ին զոհված երեխաների հիշատակին:

- Ձիովանի Գուայտան, պատմեք, խնդրեմ Ձեր մասին:

- Նախ ասեմ, որ հարյուր տոկոսանոց իտալացի եմ, որևէ հայկական կամ այլազգի արմատներ չունեմ: Սկզբում ավարտել եմ Ֆլորենցիայի Դասական լիցեյը, ուր ուսանել եմ փիլիսոփայություն, սոցիոլոգիա, արվեստի պատմություն, լատիներեն, հունարեն և այլն, ապա ավարտել եմ Ժնևի համալսարանը և ստացել բանասեր պատմաբանի որակավորում՝ որպես ռուսագետ, սլավոնագետ: Նաև զբաղվում եմ

կիրառական արվեստի պատմությամբ: Ձուգահեռ ավարտել եմ աստվածաբանական մի քանի դասընթացներ, ապա գալով Ռուսաստան՝ դասավանդել եմ: Քանի որ ինձ շատ հարազատ ու հետաքրքրական էին աստվածաբանական թարգմանությունները, զբաղվել եմ դրանցով, նաև վերադարձվելով եմ Սանկտ-Պետերբուրգի հոգևոր ակադեմիայում:

- Իսկ ո՞ր եկեղեցու հավատացյալ եք:

- Դե, ինչպես իտալացիների 99 տոկոսը,

բնականաբար ես էլ մկրտված եմ Հռոմեական կաթոլիկ եկեղեցու: Բայց ոչ միայն համակրանքով, այլ նաև մեծ սիրով եմ վերաբերում Ուղղափառ եկեղեցուն: Որպես աստվածաբան ես գտնում եմ, որ իրականում կաթոլիկների և ուղղափառների միջև լուրջ աստվածաբանական տարակարծություններ չկան: Լուրջ ոչինչ մեզ չի բաժանում, ավելի ճիշտ դա անցյալի վերավորանքն է՝ ծնված լեզվաբանական,

18

պատմական, դարավոր թյուրիմացություն-
նից: Նմանապես են խորապես վստահ են,
որ հակաքաղկեդոնականները՝ հին ար-
ևեյան եկեղեցիները՝ հայերը, եթովպացի-
ները, ղպտիները ևս ուղղափառ են: Իրա-
կանում սա մի մեծ ընտանիք է: Մեր հա-
վատը բացարձակապես նույնն է:

**- Ինչո՞ւ որոշեցիք խորությամբ
ուսումնասիրել Հայաստանն ու հա-
յերին:**

- Ինձ հետաքրքրում են ոչ միայն Հայ
առաքելական, այլև մյուս արևելյան քրիս-
տոնյա եկեղեցիները: Եկեղեցական գի-
տաժողովներից մեկի ժամանակ լսեցի
Գարեգին Ա կաթողիկոսի բանախոսու-
թյունը և միանգամից հասկացա, որ դա սո-
վորական մարդ չէ: Նրա անձը ուղղակի
շշմեցրեց ինձ. դա խորապես կրթված, բա-
ցարձակ ազատ մարդ էր, որին առաջար-
կեցի գրել իմ առաջին «Մարդու կյանքը,
երկնքի և երկրի հանդիպումը: Զրույցներ
Ամենայն հայոց Գարեգին Ա կաթողիկոսի
հետ» (Մոսկվա, 1999 թ.) գիրքը: Կարող եմ
ասել, որ նա ինքն է այս գրքի գլխավոր հե-
ղինակը: Ես պարզապես հարցերով նրան
«ասողում, հրահրում էի» որոշակի թեմա-
տիկ ուղղությունների: Իսկ հարցս հնչե-
լուց անմիջապես հետո նա պատասխա-
նում էր անկեղծ, անկաշկանդ և համապատ-
րաստից: Այսպես ծնվեց իմ հետաքրքրու-
թյունը հայերի նկատմամբ, և գրեցի ևս եր-
կու գիրք՝ «Հավատարմության 1700 տա-
րի. Հայաստանի և նրա եկեղեցու պատ-
մությունը» (Մոսկվա, 2001 թ., վերահր.
2005 թ.) և «Երից Արարաթի. Արմին Վեզնե-
րը և հայերի ցեղասպանությունը» (Մոսկ-
վա, 2005 թ.): Ներկայումս աշխատում եմ
հայերի օտարերկրյա պաշտպաններին
նվիրված գրքի վրա: Ասեմ, որ պակաս հե-
տաքրքրական չեն արձագանքները, հատ-
կապես «Զրույցներ Ամենայն հայոց Գարե-
գին Ա կաթողիկոսի հետ» գրքի մասին:
Մասնավորապես, շնորհակալություն եմ
հայտնում իրենց հավատքի դարձնելու և
եկեղեցի վերադարձնելու համար: Ես
կարծում եմ, որ Գարեգին Ա կաթողիկոսը
որպես լավագույն քարոզիչ, նաև այս գրքի
միջոցով շարունակում է իր առաքելությու-
նը: Դա ինձ շատ հաճելի է, չնայած որ ես
հասկանում եմ, որ դա երջանակահիշատա-
կի, ոչ թե իմ ձեռքբերումն է:

**- Դուք հավանաբար մեծ բարեկամ-
ներ եք եղել...**

- «Հավատարմության 1700 տարի»-ն
գրվել է որպես վեհափառի վերջին կամքի
իրականացում և մեծարանքի արտահայ-
տություն նրա հիշատակին: Նա ցանկա-
նում էր, որ մատչելի լեզվով գրված այդ
աշխատությունը լինի «Զրույցներ»-ի
ձևով, սակայն նա մահացավ: Երկար մտո-
րելուց հետո, այնուամենայնիվ, գրեցի այդ
գիրքը: Իհարկե, չեմ էլ հավակնում, որ ես
կարող եմ երբևէ գրել այնպես, ինչպես
կգրեր այդ մեծ աստվածաբանը: Այնու-
ամենայնիվ, գրեցի: Այս պահին գրեթե
պատրաստ է գրքի իտալերեն լիովին լրա-
մշակված տարբերակը՝ արդեն իտալացի
մասնագետների համար:

**- «Հավատարմության 1700 տարի»
գրքում գիտականորեն ապացուցում
եք, որ հայերն առաջինն էին, որ պե-**

**տականորեն ընդունեցին քրիստո-
նությունը: Մինչդեռ բոլորին է
հայտնի հատկապես մեր հարևան
վրացիների կարծիքն այդ մասին...**

- (ժպտում է-Ս. Մ.) Գիտեք, գեղեցիկ ու
վեհ զգացմունքները, ինչպիսիք են հայրե-
նասիրությունն ու ազգայնականությունը,
մի բան են, գիտությունը այլ բան է: Վերջի-
նիս համար հարկավոր են անկողմնակալ
կարծիքներ, այլ ոչ թե ցանկալին իրականի
տեղ ընդունելը: Հայերն աշխարհում առա-
ջինն են պետականորեն ընդունել քրիս-
տոնությունը: Գիտականորեն սա անվի-
ճելի, բացարձակ ակնառու փաստ է: Դա
ոչ միայն վրացիների, այլև Հռոմի կողմից
ընդունելի փաստ է: Ընդ որում, եթե նույ-
նիս կանկալածելի է թվում 301, 304 կամ
305, անգամ, 314 թվականը, միևնույնն է
դա ոչինչ չի փոխում:

**- Նախապես հազար ներողություն
եմ խնդրում, եթե հարցս կարող է վի-
րավորական թվալ, բայց այնուամե-
նայնիվ, ոչ որպես հայ, այլ որպես
լրագրող, ուզում եմ հարցնել: Հատ-
կապես կասկածամիտ և ամեն ինչում
ենթատեքստ փնտրող մարդիկ կա-
րող են կասկածել, թե օտարազգի
մեկ այլ ազգի, նրա պատմության մա-
սին կգրի միայն պատմորի դեպքում:**

- Անկեղծորեն պատասխանելու դեպ-
քում երևի ոմանք նույնիսկ վիրավորվե-
ն: Պիտի ասեմ, որ ոչ մի պատվեր չի կարող
լինել, քանի որ հայերը, չասեմ՝ ժլատ են,
բայց նրանք դրամի հանդեպ ունեն որո-
շակի վերաբերմունք: Կներեք, որ Ձեր
սարդիչ հարցին նույն կերպ պատասխա-
նեցի:

**- Այդ դեպքում, ի՞նչը Ձեզ առավել
հրապուրեց:**

- Հայ առաքելական եկեղեցին ոչ միայն
հին ու պատմական եկեղեցի է, որով ուղ-
ղակի ներծծված է հայկական մշակույթը,
այլ նաև՝ բացարձակ բաց, երկխոսության
և փոխհասկացողության պատրաստ, հա-
յերի մեջ եթեմիկ պատկանելությունը և հա-
վատը համընկնում են: Բացի այդ եկեղե-
ցին չի կորցրել զարգանալու ունակու-
թյունը, չի փակվել ինչ-որ հեռավոր, միս-
տիկական 5-րդ դարում: Այն ապրում և
գործում է 21-րդ դարում: Ավելին, նա գոր-
ծում է ինչպես հայրենիքում, այնպես էլ աշ-
խարհի բոլոր ծայրերում, ուր ձևավորված
է սփյուռքը: Տեսեք, մի կողմից նա ձևավո-
րում է հայերի մշակութային և հոգևոր
կյանքը, մյուս կողմից բացարձակ հարմա-
րավետության մերմուծվել և գործում է
տարբեր երկրների կյանքին զուգահեռ:
Հայերը տարբեր երկրներում միաժամա-
նակ և՛ հայ են, և՛ այն երկրի քաղաքացին,
որտեղ ապրում են: Ասեմք, ֆրանսահայը
և՛ հայ է, և՛ ֆրանսիացի, ռուսահայը՝ և՛ հայ
է, և՛ ռուս: Հայերը կարող են արմատներ
նետել յուրաքանչյուր հողում, բայց դրա-
նով հանդերձ նրանք չեն կորցնում իրենց
յուրահատուկ նկարագիրը և չեն ձուլվում:
Սա հայերի դասն է նախ և առաջ մյուս եկե-
ղեցիներից:

**- Հայ առաքելական եկեղեցին բազ-
մաթիվ խնդիրներ ունի, սկսած
սառը, բայց տանելի հարաբերու-
թյուններից երկու կաթողիկոսու-
թյունների միջև, մինչև աղանդա-**

**վորները: Ի՞նչ կարծիք ունեք այս եր-
ևույթների մասին:**

- Այո, եկեղեցու խնդիրներին քաջածա-
նոթ եմ: Դրանք բնական երևույթներ են՝
պայմանավորված պատմությամբ և հետ-
խորհրդային ժամանակահատվածով:
Դրա համար, ինչպես ռուսական, վրացա-
կան և այլ եկեղեցիները, այնպես էլ հայ-
կականը բախվում է մեծա խնդիրների:
Աղանդավորությունը ևս բնական է, քանի
որ սովետական շրջանում չի եղել հոգևոր
կյանք, այդ պատճառով էլ հոգևորի հետ
կապված ամեն ինչ մարդկանց համար հե-
տաքրքրական է: Խնդիրների լուծումը
կախված է հենց եկեղեցուց: Գարեգին Ա-ն
համարում էր, որ աղանդավորությունը
մարտահրավեր է եկեղեցուն: Եթե եկեղե-
ցին ակտիվ է և ոչ միայն սպասում է մարդ-
կանց, այլ ընդառաջ է գնում նրանց, ապա
աղանդները կոչնչանան: Ես նույնպես վս-
տահ եմ դրանում:

**- Ի՞նչ եք կարծում, ստեղծելով հա-
յերին, Աստված ի՞նչ ցանկացավ
հասկացնել մյուս ժողովուրդներին:**

- Համաձայն եմ, որ ամեն ազգի անզուգա-
կան նկարագիրը աստվածային նախա-
խնամության արդյունք է: Հայերի դեպքում
երկի դա այն է, ինչ ասացի քիչ առաջ: Հա-
վելեմ, որ հայկական եկեղեցին ազգային
երևույթ է, ինչը չես ասի կաթողիկոսների մա-
սին: Սա ի դեպ, երկու եկեղեցիների և ուժն
է, և՛ թուլությունը: Հայկական եկեղեցու յու-
րահատկությունը մի կողմից խորապես
հայկական, մյուս կողմից տիեզերական
լինելն է: Մեր դարում, երբ գլոբալիզացի-
ան ձգտում է աշխարհը դարձնել մի մեծ
գյուղ, կամ մի մեծ Մաքրոնալիս (որ բոլո-
րովին էլ ցանկալի չէ) բերելով միանման
արժեքներ, միանման սնունդ և նույնակա-
նացում, հայերն ու նրանց եկեղեցին դրա-
կան իմաստով գլոբալիզացիայի լավա-
գույն տիպարը կարող են լինել: Հայերը
կարող են հարմարվել համամարդկային
արժեքների՝ չկորցնելով սեփական ազ-
գային գիտակցությունը և ազգային յուրա-
հատկությունը: Դա հրաշալի է և շատ կա-
րևոր: Ուզում եմ շեշտել, որ միությունը
պետք չէ շփոթել միանմանության հետ:
Վերջինս կենսունակ չէ, մինչդեռ միությու-
նը տարբեր մարդկանց համախմբումն է,
երբ տարբեր մարդիկ ոչ միայն ծանոթա-
նում, այլև սիրում են միմյանց: Հատկապես
քրիստոնյաների համար այդ երևույթը հա-
րազատ է, քանի որ Սուրբ Երրորդությունը
դրա վառ օրինակն է:

**- Դուք շատ դրական բաներ եք
ասում մեր մասին: Հաճելի է լսել:
Վստահ եմ, նաև բացասական կող-
մեր նկատած կլինեք:**

- Հայերին հատուկ է մշտապես վիճելը և
հաճախ իրար հակառակվելը: Ասեմք,
երևանցին ջավախեցու դեմ է, սփյուռքա-
հայր՝ արևելյան հայաստանցու և այլն: Հա-
յոց պատմությունը ցույց է տալիս, որ երբ
հայերն այնուամենայնիվ միավորվել են,
հաղթանակել են: Հենց միության մեջ է ձեր
ուժը, չնայած որ յուրաքանչյուրը շատ ընդ-
գծված անհատականություն ունեք: Եվ,
այնուամենայնիվ, ուժեղ լինելու համար
պետք է միավորվել:

*Հարցազրույցը վարեց
Սուսաննա ՄԱՐԳԱՐՅԱՆԸ*

Հայերի ու հրեաների ցեղասպանության հիմնական տարբերությունները



1. Ինչպես գիտենք, ցեղասպանությունը որևէ հավաքականության նկատմամբ տվյալ խմբի, ազգի, պետության վարած բացասական քաղաքականության բարձրագույն աստիճանն է: Հրեաները այլ ժողովուրդների հետ ունեցած իրենց հարաբերությունների բնույթով ավելի շատ են գտնվել ցեղասպանական հարաբերությունների իրավիճակում: Համաշխարհային պատմության մեջ բազմաթիվ երկրներում (Ասորեստան, Բաբելոն, Հռոմ, Անգլիա, Ֆրանսա, Գերմանիա, Իտալիա, Իպանիա, Ռուսաստան, արաբական աշխարհում և այլն) և տարբեր ժամանակներում արձանագրված են հակահրեական շարժումներ, ինչպես պետական, այնպես էլ ժողովրդական մակարդակով: Որոշ հեղինակներ հակասեմեոտիզմ են տեսնում նույնիսկ Հին և Նոր Կտակարաններում: Սրա հիման վրա միջազգային շրջանառության մեջ է դրվել հակասեմեոտիզմ հասկացությունն ու եզրը և խոսում է տարբեր երկրներում ու ժամանակներում տարվող հակասեմեոտիզմի ընդհանուր և մասնավոր երեսների մասին:¹ Հայերն ունեցել են առճակատումներ, անհամաձայնություններ, թշնամանք տարբեր ազգերի ու պետությունների հետ իր արձանագրած հարաբերություններում, բայց գոյություն չի ունեցել հակահայկականություն գիտական եզրը միջազգային հարաբերությունների պատմության մեջ: Հակահայ քաղաքականություն է վարել միայն թուրքիան: Այդ հաստատվել է տարբեր միջազգային փաստաթղթերում:

2. Թուրքական պետությունը իր հաստատման օրից սկսել է իրավագրված, խտրականության, հալածանքի ու բռնատիրական քաղաքականություն վարել իրեն հպատակեցրած բոլոր ազգերի ու ժողովրդների նկատմամբ: Աստիճանաբար այն սաստկացել ու խորացել է դրա մեջ ընդգրկելով բռնագաղթը, ազգերի ծուլումը, արքայի ու զանգվածային սպանությունները: Թուրքական ջարդարական, ցեղասպանական քաղաքականությունը հայերի նկատմամբ բացառապատրուց ղրուսևորվեց 19-րդ դարի կեսերից, աստիճանաբար զորացավ ու հիմնավորվեց 1895-97 և 1908-09 թվականներին ու բացահայտ ազգային քաղաքականություն դարձավ 1914-1923 տարիներին: Այսպիսով, թուրքերի կողմից հայերի ցեղասպանության պատճառները թաղված են թուրքական ողջ պատմության ընթացքում: Գերմանիայում հրեաներին բնաջնջելու քաղաքականությունը ծլեց այդ երկրում ֆաշիստների հաղթանակի գուլգահեռ (1923-ից): Այդ ուղղությամբ գործնական քայլեր արվեցին անցյալ դարի 30-ական թվականների կեսերից (1933-1936): Այն ամբողջական գործադրությունը ունեցավ ԲԱՄԽարհամարտի ընթացքում՝ ֆաշիստների կողմից գրաված Եվրոպայում: Այս պատճառով էլ հրեական ողջակիզման պատճառները գտնում ենք գերմանական ֆաշիզմի պատմության և ոչ թե ողջ Գերմա-

նիայի պատմության ծալքերում: Հրեական ողջակիզումը (Holocaust-ը) պարտադրաբար ենթադրում է եվրոպական հրեաների ոչնչացման ծրագիրը, որը գործադրվեց հիտլերականների կողմից Բ. Աշխարհամարտի ընթացքում:

3. Թուրքական պետությունների (Օսմանյան և հանրապետություն) կողմից ցեղասպանության ենթարկված հայերը բացառապես այդ երկրի հպատակներն էին: Հազվադեպ կարելի էր հանդիպել այլ հպատակություն ունեցող հայերի: Գրավյալ Եվրոպայի ողջակիզման ենթարկված հրեաների լոկ մի մասը գերմանական հպատակներ էին: Ողջակիզման ենթարկվածների թվում մեծ էր թիվը այն հրեաների, որոնք այլ հպատակություն ունեին՝ ֆրանսիական, հոլանդական, դանիական, բելգիական, խորհրդային, լեհական, չեխական, ռումինական, հունգարական, բուլղարական, հունական, ալբանական, սլավոնական և այլն: Դաշնակիցների հաղթանակից հետո այդ երկրները իրենց հրեա և ոչ հրեա քաղաքացիներին տեղանակեցին ու պարտված գերմանացիներից ու հաղթանակած դաշնակիցներից պահանջեցին համապատասխան հատուցում գերմանական տիրապետության տակ տուժած իրենց քաղաքացիների համար, որոնք, վերջին հաշվով, զոհվեցին դաշնակիցների հաղթանակի ճանապարհին: Հրեական հարցը բազմատեր էր: Այն դարձավ համաեվրոպական ու համաշխարհային: Դա իր հարցը համարեց պարտված, բայց դեմոկրատական գծի վրա ընթացող Գերմանիան: Հայկական հարցը, հայերի ցեղասպանության հարցը մնաց անտեր, թեև հայերը թուրքերի կողմից ցեղասպանության չէին ենթարկվի, եթե ընդունեին Գերմանիային ու թուրքիային ծառայելու երիտթուրքական առաջարկը: Վերջիններս խոստացել էին իրականացնել հայկական մահաբերություն բարեկարգումներ ներմուծելու ծրագիրը, եթե հայերը ընդունեին առաջարկությունը: Հայերը տարբեր ճակատներում ևս պայքարեցին ու զոհվեցին ի նպաստ դաշնակիցների:

4. Երբ գերմանական ֆաշիստները հայտարարեցին իրենց ռոճով հրեական հարցը լուծելու ծրագրի մասին, նրանք նկատի ունեին գերմանական գրավման տակ գտնվող հրեաների ոչնչացումը: Այսինքն տեղի էր ունենում արտերկրի և ոչ թե

պատմական հրեաստանի ու Իսրայելի հրեաների ողջակիզումը: Երբ թուրքական կառավարությունը ծրագրեց ու գործադրեց հայերի ցեղասպանության ծրագիրը, նա նկատի ուներ հիմնականում պատմական Հայաստանում՝ հայ քաղաքակրթության օրրանում և հայկական Կիլիկիայում արմատակալած հայերին: Այս էական տարբերությունն իր հերթին ծնում է երկու խիստ կարևոր հետևանքներ, բացառիկ նշանակություն ունեցող երկու առանձնահատկություններ:

Առաջին. փախնելով, ազատվելով ֆաշիստական հալածանքներից, Եվրոպայի հրեաները հնարավորություն էին ունենում ապաստանելու այլ՝ ազատ ու դեմոկրատական երկրներում: 30-ական թվականների կեսերից մինչև Բ. Աշխարհամարտի սկիզբները Անգլիայի օգնությամբ նրանք գալիս էին ու հաստատվում Պաղեստինում, որը գտնվում էր անգլիական գերիշխանության տակ: Այսինքն, ողջակիզումը նպաստում էր, որ հրեաները իրականացնեին ազգահավաքի իրենց ծրագիրը: Աստիճանաբար Պաղեստինում մեծացավ հրեական համայնքը: Երբ 40-ական թվականների կեսերից Պաղեստինում հաստատված հրեաները սկսեցին պայքարել հանուն անկախ պետականություն ստեղծելու համար, հայրենադարձած հրեաները դարձան ազատագրական ուժերի զգալի մասը: Իսկ ցեղասպանությունից ազատված հայերը իրենց հայրենիքից դուրս գալով սփռվեցին աշխարհով մեկ՝ միշտ երազելով նորից տուն վերադառնալու ու հայրենիքին տիրելու մասին: Հրեական ողջակիզումը նպաստեց ազգային հավաքին, ազգի համախմբմանը ու հրեական պետականության հաստատմանը: Հայկական ցեղասպանությունը ցրեց հայերին ու խիստ բարդացրեց պատմական Հայաստանի մեջ ազատ ու անկախ հայ պետականություն հաստատելու հնարավորությունը:

Երկրորդ. թուրքերի կողմից կազմակերպված ցեղասպանության համար հայերի ոչնչացումը միջոց էր: Նրանց գլխավոր նպատակը հայկական տարածքները հայազուրկ դարձնելով դրանք թուրքացնելն էր, որպեսզի ընդմիշտ վերանա պատմական Հայաստանում հայ պետություն հաստատելու հնարավորությունը և հավիտյան այդ տարածքները դառնան թուրքիայի անբաժան մասը: Ցեղասպանությունը իրարից բաժանեց հայ մարդն ու հայ հողը, հայ ազգն ու հայի հայրենիքը: Հրեական ողջակիզումը նպաստելով հրեաների տուն դարձնել ու ազգահավաքին փաստորեն իրար կապեց, իրար միացրեց դարերով իրարից բաժանված հրեա մարդը և հրեա հողը, հրեական ազգն ու հրեական հայրենիքը:

5. Եվրոպայում բնակվող հրեաների ճնշող մեծամասնությունը մոռացել էր իր մայրենի լեզուն ու խոսում էր իր բնական

200

երկրի ժողովրդի լեզվով: Որոշ տեղերում օգտագործության մեջ էին մնացել ինքնատիպ բարբառներ (օրինակ՝ Ռուսաստանում): Վերջին 12 դարերի ընթացքում երթայերեն լեզվով գրքեր չեն լույս տեսել: Յուրաքանչյուր երկրում ապրող հրեա գրողը, գիտնականը, բժիշկը, պատմաբանը գրել է այն երկրի լեզվով, որտեղ ապրել է: Միջնադարում գրել են լատիներենով: Իսրայելում հաստատվելով Եվրոպայից տեղափոխված հրեաները սկսել են խոսել ու գրել մայրենի լեզվով: Ողջակիզումը նպաստել է երթայերենի վերակենդանացման, դրա պետական, գրական ու գիտական համաժողովրդական լեզու դառնալուն: Հայերի ցեղասպանությունը հայերին հեռացնելով հայր հողից ու նրանց ցրելով աշխարհով մեկ, խիստ մեծացրել է օտար լեզուն մայրենի նկատող հայ երիտասարդների թիվը, հնարավորություններ ստեղծել հայ լեզվի մաքրության թուլացման ու խթանել հայ լեզվի բնականում զարգացման ընթացքը:

6. Տեղասպանի ու զոհի հարաբերությունների հետագա ընթացքը տնօրինելու երկու եղանակ է մեզ հուշում պատմությունը՝ կամ ուրացում և կամ հանցագործության ընդունում ու ներողության հայցում: Առաջինը առաջադրվում ու գործադրվում է թուրքերի կողմից հայերի ցեղասպանության նկատմամբ, իսկ երկրորդը՝ գերմանացիների՝ հրեաների ողջակիզման նկատմամբ:

Ուրացողները ոչ միայն աստիճանաբար

ավելի ու ավելի են վատթարացնում իրենց հարաբերությունները զոհի, այլ նաև ուրիշ ազգերի ու միջազգային կազմակերպությունների հետ: Թուրքիան կամա թե ականա վատթարացնում է իր համագործակցական կապերը բուլղարների, հունգարացիների, հուլյների, արաբների, սլավոնների ու քրդերի հետ: Պատմագիտության զարգացման ու քաղաքական մթնոլորտի պարզեցման հետևանքով բազմաթիվ պետություններ, ազգեր, միջազգային կազմակերպություններ ստիպված ընդունում են իրողությունը՝ թուրքերի կողմից հայերի ցեղասպանությունը ու վատթարացումը Թուրքիայի դիրքը միջազգային ընտանիքում: Ենթադրությունը ծածկելու և իրականությունը սքողելու նպատակով ուրացող Թուրքիան հարկադրված է լինում դիմելու անբնական ու ջղային քայլերի: Այսպես. Մեհմեդ Ալի Պիրանտը տեղեկանալով հայերի ու նրանց բարեկամների կողմից միջազգային չափանիշով թուրքերի կողմից հայերի ցեղասպանության 90-ամյակի ոգեկոչումը, սարսափալի պարզեցում էր, որ հայերը աշխարհի վզին փաթաթում են մի նոր «Ցունամի» երկրաշարժ ու փոթորիկ:¹ Իսկ Դոկտ. Սետադ Լաչինը փորձում էր սեպ խրել հայ-հրեական հարաբերությունների մեջ:²

1. Mehmet Ali Birand, Be Ready for the Armenian Tsunami, Turkish Daily News, 01/04/2005
2. Sedat Laciner, Armenias Jewish Sceptisims, Its Impact on Armenian Israel Relations, (The Armenian

Issue and the Jews,) London-Ankara, 2003

Ուրացողները փաստորեն, կամա թե ականա, կերպարանավորում են ցեղասպանի, իրենց վրա վերցնում անցյալի բացասական արարքները՝ առանց կատարողները լինելու: Արդի ուրացողը դառնում է ցեղասպան, ոճրագործ և այդպիսով հնարավոր դարձնում ոճրագործության շարունակականությունը: Արդի ուրացող թուրքը փաստորեն դառնում է այսօրվա Էնվերը, Թալեթը, Սուլթան Համիդը: Իր նախորդների սխալը ընդունող ու զոհից ներողություն հայցող գերմանացին չի դառնում արդի Հիտլերը, ֆաշիստը և չի շարունակում նրանց կատարած սև գործը: Նա գերմանացի ազգը մաքրում է ֆաշիստների մեղքից և հնարավոր դարձնում, որ գերմանացին մաքուր խղճով, բաց ճակատով ու հպարտությամբ ապրի մարդկության միջազգային ընտանիքում ու մասնակցի նրա տնօրինությանը:

Stu.Weinberg, Meyer, Because They Were Jews, A History of Anti-Semetism, in the series of Contributions to the Study of World History, 1920 (republished in 1986), 288 pages; History of Hate, The Dimensions of Anti-Semetism, edited by David Berger, 1986; Critical Issues of the Holocaust, edited by Alex Grobman and Daniel Landes, The Simon Wiesenthal Center, Rossel Books, 1983.

Գևորգ ԽՐԼՈՊՅԱՆ

ՉԵՂՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Վերջերս լրացավ 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի 85-ամյակը: Այդ կապակցությամբ Հայ մտավորականների համագաղափարի խորհուրդը ԳԱ ակադեմիայում կազմակերպել էր համաժողով: Հիմնական զեկուցմամբ հանդես եկավ պատմաբան ՌԵՄ ԴԱԶԱՆՉՅԱՆԸ, որը ներկայացրեց հիշյալ պայմանագրին առնչվող և մոսկովյան արխիվներում իր ձեռք բերած նյութերը: Ռ. Դազանչյանը նշեց նաև, որ պայմանագրի ստորագրումից առաջ Թուրքիան զուգահեռ բանակցություններ էր վարում և՛ Լոնդոնում, և՛ Մոսկվայում՝ սպառնալով Ռուսաստանին: Այսինքն վերջինս հարկադրված էր շուտափույթ ստորագրել ինչ-որ պայմանագիր, որը կընդուներ, կամրագրեր որևէ սահման: Իսկ հետո Ռուսաստանն այլևս հնարավորություն չունեցավ հետ վերցնել այդ տարածքները: Ի տարբերություն Ռ. Դազանչյանի, ԱԻՄ նախագահ ՊՐՈՒՅՐ ԳՅՐԻԿՅԱՆԻ խոսքն ընդգծված հակառուսական շեշտադրում ուներ: Նա ներկայների ուշադրությանը ներկայացրեց ԱԻՄ նախագահության 2006թ. մարտի 4-ի հայտարարությունը, որում մասնավորապես նշված է. «Այսօր դիմելով «դեմոկրատական Ռուսաստանին» մենք ազդարարում ենք, որ բոլշևիզմից ու լենինիզմից, Ռիբենտրոպ-Մոլոտով բնույթի պայմանագրերից հրաժարված Ռուսաստանը պետք է հրաժարվի նաև ընդգծված հակահայական ու միջազգային իրավունքի տեսանկյունից ապօրինի այս Լենին-Աթաթուրք 1921 թվականի մարտի 16-ի պայմանագրից: Այդ պայմանագիրն ապօրինի է գլխավորապես երկու պետությունների՝ քեմալական Թուրքիայի և լենինյան Ռուսաստանի՝ երրորդ պետության՝ Հայաստանի դեմ առանց այդ պետության մասնակցության կերպով լինելու հանգամանքով: Ռուսաստանը և Թուրքիան պայմանագրի կնքում և պարտադրում բռնազավթված Հայաստանին ենթարկվել այդ պայմանագրի դրույթներին»: «Այսպիսով, - նշված է Հայ մտավորականների համագաղափարի խորհրդի ընդունած հայտարարության մեջ, - ռուս-թուրքական ապօրինի գործարքի նպատակներից գլխավորը Հայաստանի և Հունաստանի տարածքները Թուրքիային բռնակցված պահելն ու Կովկասի թաթարների համար 1918թ. ստեղծված Ադրբեյջան անունով պետության պահպանումն էր, որը իրագործելու համար անհրաժեշտ էր վերջավորել Հայոց մեծ եղեռնը»: Խորհրդի ընդունած հայտարարությամբ մեկ անգամ ևս ընդգծվում է, որ Մոսկվայի ռուս-թուրքական անիրավազոր պայմանա-

գրով Հայաստանից բռնագրավվել, Ադրբեյջանին է հանձնվել ավելի քան 20000 քառ. կմ տարածք (Հայոց ոստան Նախիջևանը և Արցախը), Հայաստանի մի մասն էլ (մոտ 8000 քառ. կմ) հանձնվել է Վրաստանին: Ուշագրավ է արժեքավորել պատմաբան ՍԱՀԱԿ ԱՍԼԱՆՅԱՆԻ պարտատառած «1921թ. Մոսկվայի, Կարսի պայմանագրերը միջազգային իրավունքի տեսանկյունից» զեկույցը: Ըստ վերջինիս, տարածքային վեճերի լուծման պարկտիկայում բազմիցս նշվել է համապատասխան ժամանակաշրջանի միջազգային իրավունքը հաշվի առնելու անհրաժեշտությունը: Վերոհիշյալ պայմանագրերը հետպատերազմյան շրջանի միջազգային իրավունքով գնահատելու ձգտումը մեծ է, քանի որ ժամանակակից միջազգային իրավունքն ավելի առաջադիմական է, քան այն ժամանակակից իրավունքը, հետևաբար այդ պայմանագրերն անվավեր ճանաչելու համար ավելի շատ կրվածներ է տալիս: Սակայն միջազգային իրավունքի հայազգի ճանաչված մասնագետ ՅՈՒ. ԲԱՐՍԵՂՈՎԸ հիշյալ պայմանագրերի առնչությամբ հակառակ տեսակետն ունի: Նրա կարծիքով, «... քանի որ ուժով պարտադրված Մոսկվայի և Կարսի պայմանագրերը գործում են նաև ներկայումս... անհրաժեշտ է նրանց իրավական գնահատականը տալ ժամանակակից սկզբունքների և նորմերի հիման վրա: Դա ուղղակիորեն բխում է «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի համապատասխան հոդվածներից»: Նկատի ունենալով վերը շարադրվածը, հասարակայնության, հայրենակցական միությունների և կուսակցությունների համաժողովում իր ընդունած հայտարարությամբ Ազգային ժողովից պահանջեց. «Ա. Ապօրինի ու անիրավազոր են մասնաշեղ 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը և չեղյալ հայտարարել այդ գործարքով Սովետական Ռուսաստանի կողմից Խորհրդային Հայաստանին պարտադրված Կարսի 1921թ. հոկտեմբերի 13-ի դաշնագիրը: Բ. Հայ-ռուսական պատշաճ հարաբերությունների նախապայման համարելով Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի հանդեպ Ռուսաստանի որդեգրելիք դիրքորոշումը, Ռուսաստանի Դեմոկրատիկ ներկայացուցիչներն ընդունված հայտարարությունը հանձնել են Աժ և Հայաստանում Ռուսաստանի դեսպանատուն:

Արթուր ԳՈՎԿԱՆՆԻՍՅԱՆ

ԹՈՒՐԻՔԸ ՄՆՈՒՄ Է ԹՈՒՐԻՔ



Տպավորություն է ստեղծվում, թե միայն ներկայումս՝ հայ ժողովրդի դահիճ Թալեաթի նկատմամբ հայ վրիժառու Սողոմոն Թեհլերյանի իրականացրած վրեժխնդրության ակցիայի 85 տարին լրանալուց հետո է, որ Թուրքիան կազմակերպում է ամենահրեշավոր չարագործներից մեկի, մարդկային ցեղի վիժվածքի փառաբանման խրախուսանքը: Մինչդեռ վաղուց հայտնի է, որ պաշտոնական Անկարան ամեն տարի հանդիսավորապես նշում է դահիճի հիշատակի օրը: Այդ մասին գիտեինք, բայց լռում էինք: Անտեսում էինք նաև այն, թե ինչ չլսված-չտեսնված ցինիզմով են թուրքերը աղ լցնում մեր վերքերի վրա: Թեպետ, ճիշտն ասած, միշտ չէ, որ լռել ենք: Դեռևս 90-ական թվականների սկզբին «Ազգ» և «Գոլոս Արմենիի» թերթերում կանոնավորապես տպագրվում էին մեր մշտական հեղինակ ՋՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻ ռազմաճակատային գրառումները, որոնք հետագայում ներգրավվեցին «Դժոխք և դրախտ» գրքում:

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում մի հատված «Դժոխք և դրախտ» գրքից, որի մեջ, կարծես, զարմանալիորեն արտացոլվում են հայ ժողովրդի դահիճի անվան շուրջ շաբաշի հետ կապված մերօրյա իրադարձությունները:

Միամիտ չլինենք և անկեղծորեն ասենք. մուսավաթական հանրապետության ժամանակներից ի վեր Ադրբեջանը, լինելով Թուրքիայի գավալը, վաղուց դարձել է, ինչպես ծրագրել էին պանթուրքիզմի գաղափարախոսները, նրա հավելուկը կամ էլ, ավելի ճիշտ, «շարունակությունը»: Եվ այս տերմինը իմը չէ: Նվաճելով Կիպրոսը՝ նախագահ էվրենը բազմաչարչար կղզին հռչակեց «Թուրքիայի մայր ցամաքի շարունակությունը»: Խորհրդային իշխանության ամբողջ յոթանասուն տարիների ընթացքում Ադրբեջանը եղել է Թուրքիայի աչքերը ԽՍՀՄ-ում: Մասնագետ անատոմները շատ ստույգ մի արտահայտություն ունեն. «Աչքերը ուղեղի մի մասն են՝ դուրս բերված մակերես»: Դա պատկեր չէ: Իրականում հենց այդպես էլ կա, որովհետև աչքը տեսողական նյարդի և անոթների միջոցով ուղղակի կապված է ուղեղի հետ: Ադրբեջանն էլ այդպիսի նյարդ ունի, դա Արաքսի աջ ափն է, որ Թուրքիան ձեռք է բերել Իրանից դեռ քսանական թվականներին, որպեսզի սահման ունենա Նախիջևանի ԻԽՍՀ-ի հետ: Եվ միևնույն ամբողջի այդ մասերը ապրում են համակեցության օրենքներով: Եվ ծիծաղելի է այսօր հանդիմանել Թուրքիային, թե նա օգնում է Ադրբեջանին կամ, որ նրան ընդհանրապես համարում է իր բաղկացուցիչ մասը՝ համաձայն պանթուրքիզմի ու պանթուրանիզմի ծրագրերի, որոնց մասին մենք կխոսենք հանգամանորեն: Անհրաժեշտություն չկա զուգահեռներ անցկացնելու 1890-1923 թվականներին Թուրքիայում և 1988 թվականից մինչև այսօր Ադրբեջանում տեղի ունեցող զագանությունների միջև: Բանի որ այստեղ մենք բազմիցս արդեն դա արել ենք, ցույց տալով Կոստանդնուպոլսում կամ Բաքվում ղըր-սևորված չարագործությունների նմանությունը: Ապացուցել ենք, որ հայկական ջարդերը իրականացվում են Թուրքիայի և Ադրբեջանի քաղաքական ղեկավարության կողմից մշակված ծրագրերով: Սակայն, իմ կարծիքով, խիստ անհրաժեշտություն կա հիշելու այն երկրների և միջազգային կազմակերպությունների վերաբերմունքի մասին, որոնք տնօրինում էին Չայաստանի ճակատագիրն այն հեռավոր և ոչ այնքան հեռավոր ժամանակներում, փորձելով իբրև թե օգնել «խաղաղ ու համբերատար հայերին»: *** Դյուրահավատ հայերը 1908 թվականի երիտթուրքերի հեղափոխությունն ընդունեցին ինչպես փոթորկվող ծովում խեղդվողը կընդունի փրկարար գոտին: Հավատացին, որովհետև երիտթուրքական առաջնորդներին եվրոպան ողջունեց որպես իսկական ժողովրդավարների: Եվ այն ժամանակ հայերը չգիտեին, որ արդեն մեկ տարի անց հայկական ճոր ջարդեր կսկսվեն, և որ, ինչպես հետո կգրի նշանավոր արևելագետ, «Պանթուրքիզմը և թուրքական ժամանակակից պատմագիտության մի բանի տեղեկացները» գրքի հեղինակ Էռնեստ Վերները. «Դաշնակիցները՝ Կայսերը և երիտթուրքական առաջնորդները, հայ բնակչության 1909 թվականի ջարդերը դիտում էին որպես փորձ, «հայկական հարցի վերջնական լուծման» ստուգում: Հատկապես գերմանական ռազմական խորհրդակալներն էին, որ խոսքով բարձր հայտարարելով «հայերի քրիստոնեական բարության» մասին, ինչպես հիմնվելով պաշտոնական փաստաթղթերի վրա գրում է պատմական գիտությունների դոկտոր Ս. Ստեփանյանը, «խորհուրդ էին տալիս Թուրքիային՝ վերականգնել 1911-1912 թվականների Բալկանյան պատերազմների ժա-

մանակաշրջանի իրենց զորքերի մարտունակությունը, բանակից քրիստոնյաների հեռացման հաշվին», հրաշալի գիտակցելով, որ խոսքը վերաբերելու է բացառապես հայերին: Բոլորից բարձր եվրոպան էր գոռում, խոսքերով արտահայտելով իր համերաշխությունը Չայաստանի հետ: 1896 թվականին դեսպան ֆոն Ջաուրմայից Կոստանդնուպոլսից տեղեկություն ստանալով հայերի հանդեպ թուրքական իշխանության կատարած զագանությունների մասին, Վիլհելմ 2-րդ կայսերն այդ փաստաթղթի լուսանցքներում նշումներ կատարեց, թվում է՝ լի մարդկային զգացմունքներով, անկեղծ կարեկցանքով. «Ու այդ ամենը քրիստոնյան և եվրոպացին պետք է հանգիստ դիտի և դեռ սուլթանի հասցեին էլ բարի խոսք ասի: Թուրք... Սա գերազանցում է մինչ այդ եղածները: Ասես Բարդուղիմեոսյան գիշերը լինի: Հարկավոր է Բարձր Դռան հետ այլ տոնով խոսել: Այնուամենայնիվ, մենք քրիստոնյաներ ենք...»: Սակայն կայսերի քրիստոնեական արցունքները բոլորովին չխանգարեցին նրան հետագայում «Արևմտյան Չայաստանում բարեփոխումների մասին հարցի անտեսման քաղաքականությունից անցնելու Թուրքիայում հայ բնակչության ցեղասպանության գործում երիտթուրքական կառավարության հանցագործ ծրագրերին ուղղակիորեն աջակցելու քաղաքականության»: Եվրոպական որոշ գործիչներ էլ հայերի հառաչանքներին պատասխանում էին ցինիկ անկեղծությամբ, ինչպես դա արեց անգլիական դիվանագետներից մեկը. «Յենց որ ինձ հաջողվի նավերս անցկացնել Արարատի կողմը, ես օգնություն ցույց կտամ ձեզ»: Մի՞թե Արևմուտքը, որին այնպես անկեղծորեն հավատում էր Չայաստանը, չգիտեին Թալեաթի հեռագրերի մասին, որ նա 1915-1916 թվականներին ամեն օր ուղարկում էր Թուրքիայի գավառները. «Թուրքիայում հայերի ապրելու և աշխատելու իրավունքները լիովին վերացված են: Կառավարությունը այդ կապակցությամբ ողջ պատասխանատվությունն իր վրա է վերցնում՝ հրամայում է ոչ մի երեխա չթողնել օրորոցում... Առանց որևէ հիմքի արտաքսեք բոլոր կանանց ու երեխաներին, ովքեր էլ նրանք լինեն, նույնիսկ նրանց, ովքեր չեն կարող քայլել և ոչ մի առիթ չտաք բնակչությանը որևէ կերպ նրանց պաշտպանելու: Բնակչությունն իր տգիտությամբ սեփական նյութական շահերը բարձր է դասում հայրենասիրական զգացմունքներից և ի վիճակի չէ զնահատելու այն բարձր քաղաքականությունը, որ վարում է կառավարությունը: Որքերի համար, այսպես կոչված, որբանոցներ հարկավոր չեն: Հիմա չի կարելի ժամանակ կորցնել այն բանի վրա, որ կերակրեն և դրանով երկարացնեն նրանց կյանքը՝ ենթարկվելով զգացմունքների ազդեցության...»: Այս մեջբերումը, որ ոչ մի նորմալ մարդ չի կարող արտագրել առանց սարսալու, լոկ մի կտոր է Թալեաթի ստորագրած հոգի սահմռկեցնող փաստաթղթերի սարից: Եվ դա արեցի ոչ անտեղի: *** Այսօր հաճախ կարելի է լսել, թե իբր Թուրքիան փոխվել է: Սա այլևս այն թալեաթական Թուրքիան չէ, ինչպես, ասենք, այսօր Գերմանիան այն չէ, հիտլերյան Գերմանիան չէ: Այդպես է արդյոք: Գերմանացի հայտնի արևելագետ և հասարակական գործիչ Թեսա Յոֆանը գրում է. «Ձանգվածային սպանությունների կազմակերպիչ Թալեաթի եղծելի աճյունը 1943 թվականի մարտին Բեռլինից տեղափոխեցին Ստամբուլ, որտեղ հուղարկավորեցին Ազատության բլուրում, Կոստանդնուպոլսի անվանի մարդկանց գերեզմանոցում, գերմանական

դեսպան և զինվորական հանցագործ Ֆրանց ֆոն Պապենի ներկայությամբ: Թուրքական առաջատար լրագրողներից մեկը այդ կապակցությամբ իր երախտագիտությունն էր արտահայտում թուրք ազգին՝ Թալեաթ փաշայի աճյունը հայրենիք բերելու համար, «որտեղ այդ ժամանակամիջոցում իրականացվել են նրա գաղափարները»: Թալեաթի մահվան օրը մինչև հիմա էլ հանդիսավորապես նշվում է Թուրքիայում և հարգանքով հիշատակվում մամուլում»: Յնարավոր է այս ամենից հետո (էլ չեն ասում այն մասին, որ թուրք լրագրողը «նրա գաղափարների իրականացման» տակ նկատի ունի հայերի վերջնական ոչնչացումը Թուրքիայի տարածքի վրա. 1890-1923 թվականների ցեղասպանությունից հետո ողջ մնացած 800 հազարից այսօր ընդամենը 40 հազար հայեր են մնացել: Չեն խոսում անկախ Կիպրոսի տարածքների 40 տոկոսը անբնակից ենթարկելուց հետո քրդերի շարունակվող ցեղասպանության, մարդու իրավունքների զանգվածային ռոտահարման մասին և այլն, և այլն), թույլ տալով, որ Թուրքիան գլխավորի տարածաշրջանում Սևծովյան դաշինքը, զբաղվի Ղարաբաղի խնդրով, լինի դա ՄԱԿ-ի, ԵԱՀԽ-ի շրջանակներում, Մինսկի վեհաժողովում, թե մի որևէ այլ կազմակերպությունում: Անթաքույց հարգանքով են վերաբերվում Իսրայել-

լին և Իսրայելի ժողովրդին, նրա ողբերգական և միաժամանակ հերոսական պատմությանը: Պատկերացնում են, թե ինչպիսի պատասխան կտային հրեաները, եթե հանկարծ գերմանացիները դամբարան կառուցեին Ադոլֆ Հիլլգրուբերի, այսինքն՝ Հիտլերի համար: Դե լավ: Չհանդիմանենք ոչ մեկին: Թող Աստված նրանց դատն անի՝ հրեաների, կանանց ու տղամարդկանց: Միմիայն այդ ձևով կարող ենք ձեռք բերել մեզ համար անհրաժեշտ կենսական տարածքները: Վերջիվերջո, ո՞վ է այսօր հիշում հայերի ցեղասպանությունը»: Հիտլերն իհարկե իրավացի էր. միայն հայերն էին հիշում հայերի ցեղասպանությունը: Հիշում էին՝ արհամարհելով ստալինյան ահաբեկչությունն ու լենինյան, այսպես կոչված, ազգային քաղաքականության մնանը չունեցող փարիսեցիությունը: Հիշում էին գործնականորեն:

Ջորի ԲԱԼԱՅԱԼ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԸ

Պարը արտահայտում է յուրաքանչյուր մի ազգի բնորոշ գծերը, մանավանդ բարքն ու քաղաքակրթության աստիճանը:
Կոմիտաս

Հայ ազգային պարի սկզբնավորման պատմությունը.

Դեռևս ամենապարզուրույն հավատալիքների առաջացման պահից պարը օրգանապես միախառնվել է սովյալ միջավայրի ծեսերին: Յնուց ժողովուրդների կյանքում պարին մեծ դեր է հատկացվում: Ինչքան շատ էին զարգանում մոգությունն ու հնապարհությունները, ավելի ուշ նաև կրոնը, այնքան բարդանում էին տարբեր նախնի-տոտեմների, ոգիների, աստվածությունների պաշտմունքին վերաբերվող պարային գործողություններով ծեսերը՝ ստանալով ավելի ու ավելի բարդ արտահայտչական տեքստ - ձևավորում, ավելի բարդ թատերականացում:

Մոգական ծեսերում իր արտահայտությունն է գտել նախնադարյան մարդու բնությունը «վերափոխելու» երգազանքը:

Շատ թատերականացված պարային ներկայացումներ փոխանցում էին համայնքի, ցեղի կամ ժողովրդի «պատմությունը», էպոսներ և առասպելներ՝ տարբեր նախնի-տոտեմների, հերոսների, ոգիների, կուռքերի կյանքի մասին, նրանց կերպարանքի և արարքների արտացոլմամբ: Նրանք սովորաբար խաղարկվում էին ընծայական ծեսերի ժամանակ, երիտասարդությանը իր ցեղի «պատմությունը» ուսուցանելու համար:

Պարային թատերականացված ներկայացումները նաև բնության պողաբերության, բուսական և կենդանական աշխարհի աճի, աշխատանքում, որսի ժամանակ, պատերազմում, ձկնորսության մեջ, հաջողության կոչող մոգական ակտեր էին:

Պարային թատերականացված ներկայացումների շարժումներով նմանակում էին ներկայացվող իրական և ֆանտաստիկ կերպարների շարժումներին և համայնքի անդամների գործունեության այն ոլորտի շարժումներին, որոնց վրա անհրաժեշտ էր «ներգործել - կոչել հաջողությունը», օրինակ՝ աշխատանքային, որսորդական, ձկնորսական, ռազմական, մրցողական և այլ շարժումներին:

Այլ շարժումների - դրական մոգության ակտերի մի ամբողջ շարքով «պայահովում» էին սեփական առողջությունը, թշնամու հանդեպ հաղթանակը:

Աշխատանքային գործիքների, սպասքի, ամենօրյա և տոնական հագուստի, կացարանի կահավորանքի, զենքի զարգացմանը զուգահեռ զարգանում էին նաև գործողությունների բովանդակության հետ կապված սրբազան գործողությունների պիտույքները, նրանց ռեկվիզիտների առարկաները, գործող անձանց հանդերձանքը, նրանց գլխարկները, դիմակները, կոշիկները, երաժշտական գործիքները, սիմվոլիկ զարդանախշերն ու նկարները:

Ժողովրդական պարային թատերականացված ներկայացումներում, կախված նրանց նշանակությունից և բովանդակու-

թյունից, մասնակցում էին միայն աղջիկները (կամ կանայք, կամ համատեղ), միայն տղամարդիկ (միայն ազգայնները, կամ միայն ամուսնացածները, կամ համատեղ), միայն երեխաները (մեկ կամ երկու սեռերի), ինչպես նաև համայնքի ամբողջ բնակչությունը համատեղ:

Համայնքի յուրաքանչյուր չափահաս անդամ (ինչպես երեխա, այնպես էլ դեռահաս) իր տոհմավագի հսկողության տակ մասնակցում էր մոգական և պաշտմունքային նշանակությամբ իր սեռին և հասակին համապատասխան գործողություններին:

Երբ պաշտամունքի կատարումը կենտրոնացավ արհեստագետ պատմագրիչների ձեռքում, թատերականացված պարային գործողությունների որոշ ձևեր սկսեցին կատարել միայն յուրաքանչյուր աստվածության պաշտամունքի պատասխանողները և նրան հաղորդակից աղջիկներն ու տղաները:

Շատ հին ժամանակներից է ընթանում նաև աշխարհիկ պարերի, մրցությունների և խաղերի զարգացումը: Պարերը, երգեցողությունը, երաժշտական գործիքների վրա նվագակցումը, ակորդեոնիկան, մրցություններն ու խաղերը սկսեցին ավելի հաճախ ծառայել ոչ միայն պաշտամունքային գործողությունների, մոգության և կրոնի նպատակներին, այլև աշխարհիկ արվեստի նպատակներին:

Հայ ժողովրդի հնագույն պարերի մեզ հասած ժառանգությունը հաստատում է ծիսական պարերում տեղային առանձնահատկություններն ու նրանց պահպանումը հայերի կողմից: Հեթանոսական ժամանակաշրջանի մասին եզրակացությունները թելադրվում են ինքնաբերաբար հին գրողների մատմանշումներով, ըստ հնագույն Հայաստանում հեթանոսական տաճարների բաշխվածության, տարբեր վայրերում տարբեր աստվածությունների պաշտամունքով:

Միաժամանակ իր սովորությունների և մշակույթի ժառանգության - էպոսի, առասպելների, պարերի, ինչպես նաև տոնակատարությունների և պաշտամունքների պահպանման ձգտումը վկայում է, որ հայկական և օտարերկրյա աստվածությունների կերպարների, անունների ու պաշտամունքների հետ խաչասերման ընթացքում պետք է հաղթեին համապայկական և տեղային սովորույթները և տեղային աստվածության գործունեության բնորոշիչ առանձնահատկությունները, նրա պաշտամունքը և նրան նվիրված պարային ներկայացումները:

Իր նախնիներից ժառանգած շարժումային պարային արմատական ֆոնդի հիման վրա հայ ժողովուրդը ստեղծեց իր հիմնական պարային համաժողովրդական շարժումային ֆոնդը՝ նրա կետագա լրացումներով և զարգացումներով, ինչպես նաև հնացած և այլևս չօգտագործվող շարժումների պարբերական վերացումով: Դեռևս 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ

ժողովրդի տարեկան մեծ տոներից շատերի հետ էր կապված բազում ավանդական հին ծիսական պարերի և թատերականացված ներկայացումների կատարումը: Հաճախ որոշ նախկին ծիսական պարեր կատարվում էին սովորույթի ուժով, քանզի նրանց անցյալ մոզական նշանակությունները սկսել էին ժողովրդի կողմից մոռացության մատնվել:

Շատ աշխարհիկ պարեր սկսեցին առանձնանալ հետզհետե մոռացվող ծիսական գործողություններից: Իսկ աշխարհիկ պարերի որոշ տեսակներ ստացան խնջույքային բովանդակություն:

Հայկական պարերի կատարման տեղը և ժամանակը.

Հայկական պարերը կատարվում էին բաց երկնքի տակ և ծածկված շինություններում:

Բաց երկնքի տակ կատարվում էին համաժողովրդական տարեկան կրոնական տոների ժամանակ. Տրնդեզ, Համբարձում, Վարդավառ, Բարեկենդան և այլն:

Հայկական պարերը բաց երկնքի տակ կատարվում էին նաև ուխտավայրերում:

Հարսանեկան ծիսակատարության ժամանակ պսակադրության համար դեպի եկեղեցի գնալու ամբողջ ճանապարհին, պսակադրության ժամանակ և փեսայի տան ճանապարհին մասնակիցների պարերը նախկինում չար ոգու խարդավանքի և չար աչքից պաշտպանելու խնդիրն էին կրում:

Բաց հրապարակում էր կատարվում նաև հուղարկավորության պարային երթը և թաղման պարերը:

Հայերը պարերը կատարում էին նաև ծածկված շինություններում: Հեթանոսության շրջանում, Հին Հայաստանի տաճարներում կատարվում էին ծիսական Տաճարային պարեր - Պարք Մեհենականը:

Փակ շինություններում բնակչությունը ավելի շատ պարում էր ձմեռը:

Տարվա տաք եղանակին դա տեղի էր ունենում այն ժամանակ, երբ պարերով ծեսերը պետք է կատարվեին կացարաններում:

Յուրաքանչյուր գյուղում և քաղաքում գոյություն ուներ հրապարակ կամ պարապ տեղ, որտեղ տարբեր տոնակատարությունների ժամանակ կազմակերպվում էին հասարակական պարեր և խաղեր:

Հնում պարերի, թատերականացված գործողությունների, խաղերի և մրցույթների մի ամբողջ շարք կանոնակարգված էր՝ ըստ կատարման ժամանակի: 20-րդ դարի սկզբին արդեն ծիսական մի շարք պարեր սկսեցին կատարվել իրենց ծեսերից դուրս, ցանկացած ժամանակ, ցանկացած տեղում:

Պարերի կատարման հերթականությունը նույնպես խիստ կանոնակարգված էր:

Հայկական պարերի մասնակիցների

քանակը, սեռը և տարիքը.

Ըստ մասնակիցների քանակի, հայկական պարերը բաժանվում են կոլեկտիվ, խմբային, զույգային և մենապարերի:

Կոլեկտիվ պարերում կարող էին մասնակցել միանգամից անսահմանափակ քանակով պարողներ: Խմբային պարերում, որոնք հիմնականում ավելի կատարողական բարդություններ էին կրում, հնարավոր չէր մարդկանց մեծ քանակով պարել և պարում էին 10, 15, 20 հոգով:

Կախված կոլեկտիվ պարի նշանակությունից և բովանդակությունից՝ այն կարող էին կատարել առանձին կամ համատեղ՝ ամուսնացած տղամարդիկ, կանայք, պատանիները, օրիորդները:

Հին հայկական կոլեկտիվ պարերը այս կամ այն սեռի և տարիքի անձերի մասնակցությամբ, բաժանվում են կանանց և տղա-



մարդկանց պարերի, պատանիների և օրիորդների պարերի, աղջիկների և տղաների - մանկական պարերի:

Մեզ հասած հայկական կոլեկտիվ պարերի առեղի քանակի համեմատ խմբական պարերի, զուգապարերի և մենապարերի քանակը այնքան էլ մեծ չէ, սակայն մեզ են հասել այս պարատեսակների որոշ անգին գոհարներ:

Հայկական պարերի տարատեսակները.

Հայկական պարի հիմքը զիստային (զսպանակավոր) շարժումներն են: Սակայն նույնիսկ դրանում խիստ տարբերություն կա, թե մեկ պարային քայլի ընթացքում քանի զսպանակ է արվում, ըստ որում՝ այդ զսպանակներն էլ կարելի է անել խորը կամ շատ մեղմ:

Հայկական պարերը կարելի է բաժանել ըստ մի քանի բաղկացուցիչների: Նախ և առաջ, կատարման բնույթով պարերը կարելի է բաժանել երեք մեծ խմբերի. 1. պարերգեր, որոնք զուգորդվում են երգերով, 2. նվագակցվում են ազգային երաժշտական գործիքներով, 3. նախորդ երկուսի համադրումով:

Կարելի է տարանջատել նաև շարժումների ձևերով՝ կենցաղային, աշխատանքային, արտահայտչական, նմանակող, նկարագրող, խորհրդանշական, պայմանական:

Կոլեկտիվ և խմբական պարերը տարբերվում են իրարից նաև ձեռքերը բռնելու ձևերով՝ ճկույթներով, ավերով, խաչված ավերով, ուսերով, գոտկատեղից:

Իսկ ամենակարևոր տարանջատումը պարերի բովանդակությունն է, որոնց մեծ մասը հնում ունեցել է բանավոր տեքստային զուգարդում և իրենց բովանդակությամբ բաժանվել է հետևյալ խմբերի՝ առասպելական, ծիսական, էպիկական, աշխարհիկ, լիրիկական, աշխատանքային, պաշտամունքային, ռազմական, ճանապարհի, որսորդական, լարախաղացների, մանկական և այլն:

Պարերի մասին խոսելուց չի կարելի չնշել նաև հայկական տարազների առանձնահատկությունների մասին, որոնք ոչ միայն իրարից շատ տարբեր են, այլև բնորոշում են այն տարածաշրջանը, գավառը, նահանգը, որը ներկայացվում է:

Պարերը տարբերվում են իրենց տարածքային պատկանելությամբ, քանի որ բնակլիմայական պայմաններն իրենց անջնջելի հետքն են թողել նրանց վրա:

Հայկական պարավեստը ունի պահպանված այնպիսի նմուշներ, որոնք արժանիորեն կարող են համարել համաաշխարհային պարային գանձարանը, եթե հիարկե նորից հայտնվեն ուշադրության կենտրոնում:

Գագիկ ԳԻՆՈՍՅԱՆ

ԱՊՐԻԼԻ ՄԵԿԻՑ ԿԳՈՐԾԵՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՆՈՐ ԴԱՄԻՉՆԵՐ

Ապրիլի 1-ից 31-ը գործածության մեջ կդրվեն փոստային նոր դասիչները (ինդեքսներ): Երևանի փոստային բաժանմունքի նոր դասիչները նախկին 375000 վեցամիջ թվի փոխարեն կդառնան քառամիջ 00** գրառմամբ, որտեղ **-ը նախկին դասիչի վերջին երկու թվերն են: Օրինակ՝ Երևանի 26-րդ փոստային բաժանմունքի նախկին 375026-ի փոխարեն կիրառվան մեջ է դրվում 0026 դասիչը, կամ Երևանի 5-րդ փոստային բաժանմունքի 375005-ի փոխարեն

0005 դասիչը: Ինչպես ասաց «Հայփոստ» ՓԲԸ մամուլի պատասխանատու Աստղիկ Մարտիրոսյանը, խորհրդային տարիներից ժառանգած փոստային դասիչները ՀՀ քառամիջ դասիչներով փոխարինելը պարզեցման և հիշելի դարձնելու նպատակ ունի: Այս ուղին սկզբունքով կփոխվեն նաև 10 մարզային փոստային մասնաճյուղերի դասիչները.

Արագածոտնի մարզ՝ 02**-05**
Արարատի մարզ՝ 06**-08**
Արմավիրի մարզ՝ 09**-11**
Գեղարքունիքի մարզ՝ 12**-16**
Լոռու մարզ՝ 17**-21**
Կոտայքի մարզ՝ 22**-25**
Շիրակի մարզ՝ 26**-31**
Սյունիքի մարզ՝ 32**-35**
Վայոց Ձորի մարզ՝ 36**-38**
Տավուշի մարզ՝ 39**-42**:

ԱՐՄԵՆՊՐԵՍ:

Նվիրակ փառասպելներ

Եվ այս ամենը պատմեցինք ոչ ի պատիվ Աստծո սրբերի, որոնք՝ ամենապայծառ կավատով ու վարքով ճանաչված՝ կարգվեցին, այլ ի քաջալերիչ օրինակ իրենց հոգևոր զավակներին և այն ամենքին, որ նրանց միջոցով աշակերտելու են սերնդե սերունդ:

Կորյուն «Վարք Մաշտոցի» (իր)

Մարդ Աստծո Արարածին հատուկ է ինքնաճանաչման ոգևորումը, ինչը տքնաջան մշակին ընծայում է իրեն, միմիայն իրեն վերապահված նվիրական գործը, շնորհում ինքարտահայտման ձիրք ու կորով և այդուհետ կայացած ինքնահաստատմամբ՝ դատում նրան լինելության, լույսի, սերմնացանների շարքը, հռչակում՝ որպես ազգի մշակութային ժառանգության կրողը, էությունն ու ոգին՝ ցուցանելով դեպի կատարելություն ձգվող նոր արահետներ...

Այդպիսին էր Մեծն Մաշտոցը, որի գործն ապրում է արդեն շուրջ 1600 տարի, ում գործի քաջալերիչ օրինակը դարեր շարունակ ծնել ու դեռ պիտի ծնի հոգով ու գործով արժանավայել, աշակերտելու կարող հետնորդներ:


Մաշտոցյան ոգու զինվորյալներից է մեր անվանի հայրենակիցը՝ մասնագիտությամբ մաթեմատիկոս, Երևանի Տնտեսաիրավագիտական համալսարանի ամբիոնի վարիչ, հանրաճանաչ տառաստեղծ Էդիկ Ղաբուլյանը, ով, իր դասախոսական աշխատանքից գատ, արդեն շուրջ 20 տարի նվիրվել է հայկական համակարգչային տառատեսակների ստեղծման և մշակման ազգաշահ գործին, ում կողմից ստեղծված համակարգչային հայկական տառատեսակներն արդեն վաղուց արժանացել են բարձր գնահատանքի, ներդրվել տեղեկատվական, գրահրատարակչական, տնտեսական և այլ ոլորտներում:

20-րդ դարի վերջին երկրում համակարգչային տեխնոլոգիաների բուռն զարգացումը գործունեության գրեթե բոլոր ոլորտներում առաջ բերեց մի շարք հիմնախնդիրներ՝ կապված տեղեկատվության և հաղորդակցության կազմակերպման հետ: Համակարգչային տեխնոլոգիաների ներդրման հախուռն բնույթը հատկապես վտանգեց հայկական գրանշանների՝ տառերի պահպանությունը: Նախկինում գործող տպարանները դադարեցին գոյություն ունենալ, մշակված ու երկար տարիներ գործածվող լինոտիպային և գեղարվեստական տառատեսակները դուրս մղեցին գործածությունից, և գրահրատարակչության կիրառելի եղանակը դարձավ համակարգչային արտադրությունը: Համապատասխան հայկական տառատեսակների բացը փորձ արվեց լրացնել այլ՝ լատինական այբուբենի տառամարմիններով: Քչերը գիտակցեցին վերահաս «աղետի» ահագնությունը և փորձեցին, սահմանափակ տեխնիկական միջոցներով, «փրկել» հայկական տառատեսակները:

Այդ քչերի մեջ էր նաև Էդիկ Ղաբուլյանը, որը, ձեռնարկված տառատեղծման գործից գատ, ջանք չխնայեց նաև ոլորտում իրավահարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Նա մշակեց «Հայկական համակարգչային տառատեսակների մշակման, ներդրման և դրանց կիրառության կանոնակարգման մասին» ծրագիրը, որը շատերին, այդ թվում՝ պետական ատյաններին ստիպեց լրջորեն վերաբերվել հիմնախնդրին:

Արդյոք պատահակա՞ն էր նրա՝ մաթեմատիկոս-գիտնականի ընտրած ուղին: Բնավ:

Մանկանը, ում ժամանակի հրամայականով և որդու հետագա ճակատագրով մտահոգ ծնողները ռուսական դպրոց էին տարել, ընդդիմացել էր. պահանջել՝ իրեն մայրենի լեզվով գրական ստեղծագործությունների ծանոթացնել: Հայրը նեղվել էր և, քանի որ ինքն էլ տոհմիկ հայ էր և աշխարհը յուրովի ընկալող անհատականություն, հոգու խորքում զգացել էր թույլ տված վրիպումը: Այնուհետև ամեն օր՝ անտեսելով աշխատանքից հոգնածությունը, որդու համար շարունակաբար կարդացել էր Րաֆֆու «Սամվել» վեպը... Ի վերջո, միասին ավարտել էին հայրենասիրական այդ գուլխագործոցը և երկուստեք փառավորվել: Ղաբուլյանների տոհմը դեռ հնուց ի վեր հայտնի էր բազում շնորհներով: Նրանց մեջ հայտնի էին հատկապես «նաղաշները»՝ նկարագարող վարպետները, նկարիչները: Հետո, հետո գեներով փոխանցված այս հատկանիշը (զծի զգացողություն, նրբաճաշակություն) իրեն զգացնել պիտի տար... Արդյունքում՝ «անդառնալի» հայրե-



մասեր հայորդու կայացումն էր, ով ոչ միայն խորությամբ ըմբռնեց ազգային գոյատևման սկզբունքները, այլև ստեղծագործ ոգով դարձավ մերոպայան գրերի երդվյալ պաշտպանն ու նվիրակը:

Թեև ընտրեց մաթեմատիկոսի մասնագիտությունը և ընդունվեց Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետ, այնուամենայնիվ, նրան հանգիստ չտվեցին հայոց գրերն ու Մաշտոցի մեծագործությունը: Ըստ իս, միայն այս մասնագիտությունը պիտի ընձեռեր նրան այն հնարավորությունը, ինչը թույլ կտար մոտենալ տառատեղծման տառը, հենց գործուն մտավոր համակարգի, ճշգրիտ հաշվարկի առկայության արտահայտությունն է:

Այսօր նա մոտ 200 տառատեսակների հեղինակ է: 2005թ.-ին Հանրապետությունում կազմակերպված «Մաշտոց-1600» մրցույթի հայկական համակարգչային տառատեսակների բացառիկ անվանակարգերի եղած չորս անվանակարգերից երկուսում արժանացավ գլխավոր և մեկուս առաջին կարգի մրցանակի: 2004թ.-ին իր անմիջական հեղինակությամբ հրատարակվեց «Հայկական համակարգչային տառատեսակներ» տառամատյանը, որի լույսընծայման գործում իր արժանի ու ինքնատիպ ավանդն ունեցավ, ավաղ, վաղամեռիկ որդին Հայկը:

Էդիկ Ղաբուլյանի գործով հետաքրքրված են ոչ միայն մեզանում (Հայաստանում գործածվող համակարգիչներում մեծամասամբ կիրառվում են Ղաբուլյանի հեղինակած տառատեսակներ-

րը) և Սփյուռքում, այլև՝ արտասահմանում: Ի դեպ նրա համակարգչային տառատեսակների մի քանի տարբերակներ դարձել են մատենադարանի սեփականությունը:

Ոլորտում առկա է նաև միջազգային համագործակցության ընդլայնման միտում: Մեծ Բրիտանիայի Լինքոլն քաղաքի համալսարանի արվեստի բաժնի ճարտարապետության և դիզայնի մասնաճյուղի գրաֆիկական ձևավորման և դիզայնի մասնաճյուղի գրաֆիկական ձևավորման և տպագրության առաջնակարգ դասախոս Քերոլայն Պուլզոլիոյի խնդրանքով այժմ համատեղ մշակվում է անգլերեն և հայերեն նոր տառատեսակներ՝ վերոհիշյալ համալսարանի համար: Էդիլ Ղարուզյանը մասնակցեց տառաստեղծների TDC2 միջազգային միջույթին, որը անցկացվեց դեկտեմբերի 16-ից հունվարի 25-ը ԱՄՆ Նյու-Յորք քաղաքում:

Դեռևս միջնադարից լայն կիրառություն ունեցող կցատառերը վերացման վտանգի տակ էին, ինչը չվրիպեց նրա աչքից ու, օգտվելով UNICODE համակարգի ընձեռած հնարավորություն-

ներից, Ղարուզյանը վերստին սկսեց իր մշակած տառաձևերում ներդնել կցատառեր (մն. մե. մի, մի, վն):

Իսկ իբրև մարդ, քաղաքացի, ընկեր...բավական է թեկուզ մեկ անգամ նրա հետ սեղան նստել... Կամեցող ու նրբանկատ, ազգային շահերի հանդեպ չափազանց զգայուն ու անզիջում, «բարի, գեղեցիկ, առաքինի» ընկերոջն անդամաճան, պրեզիդենտը «իր» Մաշտոցով ու Թումանյանով ապրող մարդը, ոչնչով չի զիջում գիտնականին:

Այժմ նա լծվել է մեծ ու տևական մի գործի: Դպրոցական դասագրքերի համար ստեղծում է համակարգչային տառատեսակներ, որոնք կհամապատասխանեն երեխայի տարիքային, հոգեբանական առաձեռնահատկություններին:

Բարի է քո բռնած գործը, Վարպետ: Աստված պահապան նոր ձեռնարկումներդ: Քեզանով թող հարատևեն մեսրոպյան սուրբ գրերը՝ ի շահ մեր ազգի ու գալիք սերունդների...

Գագիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ ԵՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

Շուրջ քսանամյա լռությունից հետո Վանաչորում կնշվի երգի փունը

Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանի ու քաղաքապետարանի կրթության և մշակույթի բաժնի պետ Գագիկ Աղաբաբյանի նախաձեռնությամբ, շուրջ 20 տարի ընդհատումից հետո, կրկին կյանքի կկոչվի վանաձորցիների ավանդական երգի տոնը:

1955 թվականին կոմպոզիտոր Էդուարդ Կարթմյանը Կիրովականում հիմնադրեց երգի տոնը, որը երեսուն տարուց ավելի քաղաքի սիրված տոնակատարություններից էր: Քաղաքամերձ տոհմերի պուրակում հազարավոր կիրովականցիներ էին հավաքվում: Մասսայական կատարումներով հնչում էին սիրված երգեր: Այդ օրը քաղաքի երաժշտական կրթօջախների, հայտնի համույթների և վարպետ կատարողների կողքին հանդես էին գալիս նաև տոհմի ջանասիրաբար նախապատրաստված աշխատանքային կոլեկտիվներ, ուսանողներ, դպրոցականներ, անհատ կատարողներ: Քաղաքի պատմության մեջ մեծ նշանակություն ունեն երգի տոնը, որ սովորական առօրյան վերածում էր ուրախ տոնակատարության: Ավանդույթի վերականգնումը ոչ միայն բարի հուշեր կարթմյանցի վանաձորցիների մոտ, այլ մեծապես կնպաստի քաղաքի մշակութային կյանքի աշխուժացմանը, երգչախմբային արվեստի զարգացմանը:

Օրերս քաղաքապետարանի կրթության և մշակույթի բաժնում կայացած խորհրդակցության ժամանակ որոշվեց երգի տոնն անցկացնել մայիսին, իսկ վանաձորցիների համաքաղաքային միջոցառման վայր ընտրվեց «Բոլոր քարը»: «Ամեն ինչ կկազմակերպենք այնպես, որ տոնախմբությունը նմանվի պատմություն դարձած համաքաղաքային ամենամյա երգի տոնի հանդիսություններին», - ասաց քաղաքապետարանի կրթության և մշակույթի բաժնի պետ Գագիկ Աղաբաբյանը: Այդ օրը նշված վայրում կգործեն սննդի կետեր: Շրջապայքը տոնական տեսքի բերելու նպատակով կպատրաստվեն պաստառներ: Մասսայական կատարման համար ընտրել են 3 երգ, որոնք առավել սիրված են ժողովրդի կողմից, և դրանց բազմաձայն ներդաշնակ կատարու-

մը կազմակերպելն ավելի դյուրին կլինի. Գրիգոր Հախինյանի «Կիրովական» երգը, Խոսք Վահան Ամատունու, «Ամպի տակից ջուր է գալիս» Արմեն Տիգրանյանի «Ամուշ» օպերայից, հայկական ժողովրդական «Կենաց երգը» (Թ. Ալթունյանի մշակմամբ):

Վերոնշյալ երգերի խոսքերն ու երաժշտությունը ժողովրդին սովորեցնելու նպատակով տպագրվելու են բրոշյուրներ, որոնք կբաշխվեն բուհերին, ուսումնարաններին, հանրակրթական դպրոցներին, ուր մասնագետները կուսուցանեն երգերը: Համաքաղաքային տոնախմբության իրենց մասնակցությունը կբերեն քաղաքի երաժշտարվեստի բոլոր նվիրյալները. քաղաքապետարանի կամերային երգչախումբն ու նվագախումբը, երգի թատրոնի երգիչ-երգչուհիները, Գուգարաց թեմի «Վարդանանց հետնորդներ» փողային նվագախումբը: «Հորովել» երգի-պարի պետական համույթը, քաղաքի վեց երաժշտական դպրոցների երգչախմբերը և այլն: Ավանդույթի համաձայն՝ Վանաձոր կծամանեն բազմաթիվ հյուրեր, ճանաչված համույթներ, սիրված երգիչ-երգչուհիներ: Երգի տոնի հանդիսությունը խմբավարելու է քաղաքապետարանի կամերային երգչախմբի գեղարվեստական ղեկավար և խմբավար Ռուզաննա Մխիթարյանը: Ի դեպ, երգի տոնի առաջին հանդիսությունների խմբավարը Կ. Մելիք-Վրթանեսյանն էր:

Պարոն Աղաբաբյանը նշեց, որ քաղաքի հեռուստաընկերությունները և լրատվամիջոցները մեծ դեր ունեն համաքաղաքային տոնը հավուր պատշաճի կազմակերպելու, ժողովրդին իրազեկելու գործում, որպեսզի, ինչպես ոչ հեռավոր անցյալում, երգի տոնի հանդիսությանը ողջ ժողովուրդը հանդես գա ոչ թե իբրև հանդիսատես, այլ հանդեսի մասնակից, «Ցանկալի կլինեք, որ լրատվամիջոցների օգնությամբ տոնին մասնակցելու հրավիրվեն համաքաղաքային երգի տոնի վետերանները», - ասաց պարոն Աղաբաբյանը:

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԴԱՐՉԻՆՅԱՆԸ ՉԵՄՊԻՈՆԻ ՄԱՏԱՆԻ ԿԿՐԻ

Վանաձորցի ճանաչված պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Վախթանգ Դարչինյանին չեմպիոնի մատանի կհանձնվի IBF-US-BA-ի ամենամյա՝ 23-րդ համաժողովում, որը կայանալու է մայիսի 30-ից հունիսի 3-ը: Մատանին հանձնվում է տիտղոսը 3 անգամ հաջողությամբ պաշտպանած չեմպիոններին: Հիշեցնենք, որ հերթական չեմպիոնա-կան մենամարտը մեր հայրենակիցը շահեց մարտի 3-ին՝ ԱՄՆ-ում նոկաուտի ենթարկելով ֆիլիպինցի Դիոսդադո Գաբիին: «Շատ ուրախ կլինեմ ստանա-

լու այդ մատանին: Իմ պրոմոութեր Հերի Շոուն փորձում է հունիսի 3-ին ԱՄՆ-ում ինձ համար մենամարտ կազմակերպել Խորխե Արսեի հետ: Վստահ եմ, որ նրան ևս նոկաուտի կենթարկեն: Ընդամենը 23 օրվա պատրաստականությամբ 8-րդ ռաունդում նոկաուտ ուղարկեցի Գաբիին: Իսկ Արսեի հետ առավել ևս խնդիր չի կլինի, քանզի ամբողջ մեկ ամիս եմ ունենալու պատրաստվելու համար», - հայտարարել է Դարչինյանը:

Մամվել Չուլոյանի բանաստեղծությունը որպես ապրելու և զգալու հաճույք

Նախ սա սահմանյալ Շնորհի է՝ բառի նախնական իմաստների հետ հարաբերումն ու հաղորդակցումը:

Եվ տրված հար պարտապանության և պարտամուրհակի մարման գիտակցումը Շոալի, առաջ ի խորոց մեղան է, որը բանաձևվում է. «Տե՛ր, քո տվածը ավազափով ինձ արժան արա...»:

«Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ...» սա այն սահմանագիծն է, որ տարանջատում է իր գիր անող լիկ-կայանական կարդացվորների փառանգը բան-ա-ստեղծելու և տեսակի պաշտպանության կոչման հավատամքն ունեցողներից: Միաժամանակ այն սահմանագիծն է, որով ոչնչացում տարբերվում է մահկանացուից:

Չուլոյանի բանաստեղծական հուզումն է, որ արարչագործությունը սկսվում է յուրաքանչյուր ծնունդով, և յուրաքանչյուր ծնունդ՝ ոչնչացումից մինչև մահկանացու և «բանական մտազար», սաղմն է բանական ոգու, որը ձգտում է կատարելության, որը հենց ինքը՝ կատարելության ոգին է: Կատարելության ձգտման արտահայտություն է, երբ պոետը մարդու հարաբերությունը աշխարհի հետ փորձում է ամբողջական տեսնել:

Մամվել Չուլոյանը ընթերցողին տեղափոխում է այն աշխարհը,

որտեղից գալիս է, և այն աշխարհը, որը ստեղծում է:


Հերձվածող ու մորթվող գառի միակ վկա, աստվածացող դև ու Տիրոջ ներող հայացք, ամուլագարմ ներքիններ ու կրքի գալարք, ձեռնասուն դարձած խև ու խելառ տղերք, կա ու չկա...

Չհասցրեց շատ բան անել, բայց հասցրեց գրքով գրական ասպարեզ իջնել ուշացած, ոչ իր, մեր ու ժամանակի մեղքով: Տնփեսա չեղավ պոեզիայում, այլ տանտեր ու դրա իրավունքով սկսեց ղեկավարել ՊՄ Լոռու բաժանմունքը՝ իրավարի ցրված, սակայն ջերմ կամեցողությամբ:

Կորցրած հայրենիքի պապերի կերպարով. «Ինձնից մինչև եսի» դրամայով, գնաց դեպի իր հրաշք բալլադը: Ծով ու երկինք հորիզոնների որդին լինելով՝ ստեղծեց «կապույտ թռչունի» գրական իր համարժեքը, չմտածելով անգամ, որ աշխարհիկ իր գահավեժը մեզ անմխիթար ողբ է բերելու: Եվ, եթե մի օր հրատարակվի 20-րդ դարի բալլադ գրական ժանրի ընտրամին, ապա այն պիտի որ երիզի ճշմարիտ պոետ Մամվել Չուլոյանի «Թռչնածուկը» մնայուն արժեքը:

ՍԵՆԱ ՍԱՆԹՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մամվել Չուլոյան



ԹՈՉՆԱԶՈՒԿԸ

Հետո ինչպե՞ս, ինչպե՞ս եղավ
Չուկը մի օր իր երագուն
Մի լուրթ կապույտ երկինք տեսավ
Ու երկնքում ոսկե թռչուն:

Երբ ցնորքը հալվեց-անցավ,
Ասես երբեք չէր էլ եղել,
Չուկը միայն նոր հասկացավ,
Որ երբեք չի մայել վերև:

Նայեց, տեսավ ծովի վրա
Ուրի՜շ-ուրի՜շ եթեր մի լուրթ,
Ուր թռչում, թե լող էր տալիս
Ոսկեղենիկ հրաշք մի ձուկ...

Չուկը ուզեց երկինք լողալ
Ինքնասպան ճիգով անգոր,
Անվե՛րջ-անվե՛րջ վեր բարձրանալ,
Գրկել անհաս երազն իր նոր...

Լոկ մի վայրկյան պոկվեց ջրից,
Թվաց ամբողջ մի դար տևեց,
Ու շնչահեղձ ընկավ նորից
Ծովի կապույտ ջրերի մեջ:

Նա զգաց, որ երկինք չունի
Եվ չունի վեր տանող թևեր,
Որ Արարիչն հորինումի
Իրեն որպես Չուկ է ձևել...

Եվ ծովը, որ չուներ սահման,
Դարձավ հանկարծ մի նեղ վանդակ,
Ինքը՝ խիտունց որդանման,
Անձև, անշուք ու այլանդակ:

Իջավ-սուզվեց խորքը ծովի,
Բանտվեց մի մութ խուլ անձավում,
Ուր արևի ոչ մի շողիկ
Ու ոչ մի ձայն չէր թափանցում:

Ուխտեց երբեք չբարձրանալ,
Ապրել իր մութ մղձավանջում,
Չտառապել, չցանկանալ
Ոչ թռչիք, ոչ անմիտ անկում:

Իսկ թռչունը ծովի վրա
Իր բախտի ձուկն էր որոնում,
Ցած էր կանչում ծովը նրան,
Ալիքների խաղով գերում:

...Մի գիշեր, երբ խավարը սև
Ծով ու երկինք մութով պատեց,
Հանկարծ ցածում ջրերի մեջ,
Հավքը ձկանն իր նկատեց...

Երկնքը անգուսպ, ինքնամոռաց
Հավքը իրեն ծովը նետեց...
...Անդրադարձը լուսնի դողաց,
Լուսնեղջյուրը ամպում խեղդվեց...

Երկնքից լուրթ երագների,
Թե կարոտի ծովից կապույտ
Հրաշքներով այգը հղի
Ծնեց ոսկե մի թռչնածուկ...

Որդին երկու Կապույտների,
Որ չգիտե ոչ մի սահման,
Մեկ թռչում, մեկ լող էր տալիս
Թռչունի ու ձկան մեջ:

Որ Կարոտը հավերժ թևի,
Որ երազը մնա անեղծ,
Տենչը սիրո հարատևի
Թե երկնքում, թե ծովի մեջ:

Կա՞ր, թե՞ չկար, չկա՞ր, թե՞ կար...
Կար, չկային չեն հավատում...
Ես երագում նրան տեսա,
Դուք էլ փնտրեք ձեր երագում:

ՏԱՐԵՄՈՒՏ

Այս գառնամախտը, թվում է, հին է, Մենք անբուժելի, անհույս հիվանդ ենք, Եթե մեկ միլիոն մեռած հոգիներ Կան այս քաղաքում անձև ու անդեմ:

Մեր ուղեղներն են այդպես խաթարված,- Ի՞նչ է լինելու սրանից հետո, Այս է նշանն այս հեռացող տարվա՝ Մենք տառապում ենք մի համաղետով,

Որին չենք ուզում ոչ մի անուն տալ, Որ գողի նման մերս է սողոսկել, Ու խաբիվել են որմերը մեր տան՝ Ցնծության ճառեր ու դատարկ խոսքեր: Սրիկաների ի՞նչ շքահանդես, Ինչպիսի՞ թծմանք, ինչպիսի՞ եռանդ, Մեր հոգետունը նրանք են քանդել, Ու մենք չգիտենք՝ ո՞րք ենք, թե՛ մեռած:

Ահա մեկ միլիոն մեռած հոգիներ - Ո՞վ է այսքան մարդ ի մի հավաքել, Մենք վճարում ենք մեր սողքի գինը՝ «Ամուլ ընտրություն, անգո հանրաքվե»:

Ու քարչ ենք տալիս մենք մի կերպ մեզ հետ Մեր տարիներն ու օրերը չապրած, Ու թափառում է մեր երկրորդ կեսը Քաղաքում անտուրք ու ոչնչապաշտ:

Ու խառնվել ենք հիմա ազգովին Մենք չգոյության այս երթին մթար, Ու աղերսում ենք նորից ու նորից - Մեզ ահեղ ժամին փորձության մի տար:

Մի թող անհոգի, անսիրտ սատակենք, Տո՛ւր կենդանության գոնե մի նշույլ, Մեր մեջ թափանցած մեծո՞ղ դատարկն է Մեզ ամայության անդունդը թշուր:

Մի ուրվական է քաղաքում քայլում, Նրան իշխում է սոսկալի մի նեռ... Իրենց ձեռքերն են երկինք կարկառում Ահա մեկ միլիոն մեռած հոգիներ...
Հրայր ԹԱՄՐԱԶՅԱՆ

Կա՞ր, թե՞ չկար, չկա՞ր, թե՞ կար...
Կար, չկային չեն հավատում...
Ծովում ոսկե մի ձկնիկ կար,
Իսկ երկնքում՝ ոսկե թռչուն:

Չուկը երգն էր, բախտն էր ծովի,
Ոսկեթեփուկ, ոսկելողակ
Չկնիկ էր նա հորինովի,
Կապույտ ծովում փոքրիկ շողակ:

Չէր ճանաչում ոչ ոք նրան.
Ապրում էր գոհ, ձկնավայել,
Նրա համար ոչ մի ձկնորս
Դեռ ոսկեղեն ցանց չէր կարել:

Ծովից բարձր լազուրում պերձ,
Երկնքի լուրթ մաքուր ծոցում
Թևածում էր, երգում անվերջ
Մի հորինված ոսկե թռչուն:

Չէր նկատել ոչ ոք նրան,
Չկար նրան փնտրող աչքեր,
Նրա համար ոչ մի որսորդ
Չէր հորինել ոսկե նետեր...

Ապրում էին ձուկ ու թռչուն՝
Միայնակ գոհ ու անընկեր,
Մեկն իր ծովի կապույտ գրկում,
Մյուսն իր ծովի երկնքին տեր:

Անմահության խնչորի հեքիաթը

Ձարմանալիորեն մեզ հետ հաճախ ապրում են անհատներ, որոնք ստեղծագործում են յուրովի և փորձում են ներփակվել իրենք իրենց մեջ՝ ծայրայալ մնալով իրական աշխարհից: Աշխարհ, որտեղ շատ ստեղծագործողներ ոչ թե իրենց ետևից են տանում ժողովրդողին, այլ հակառակը, վազում են ժողովրդի ետևից՝ նրանց մատուցելով այն, ինչը կբավարարեր ժողովրդի զգայարաններին, բայց ոչ բանականությամբ: Հակոբ Գազազյանը, որ ավելի շատ գիտության մարդ է, քան գրականության, այն ստեղծագործողներից է, որոնք նոր սահմաններ են բացում մեր աշխարհըմբռնման առջև և օգնում են նորովի վերախորհել և դատել մեր անցյալը, ներկան և ճիշտ ընտրություն կատարել ապագա հնա-



րավոր զարգացումների հարցում: Նրա խորը փիլիսոփայությունը և գիտական նոր մտածողությունը կարող են օգտակար լինել բոլոր նրանց, ովքեր ապրում են այսօրվա Հայաստանի հոգսերով և մտախոհ են նրա ապագայով: Հուսով եմ, որ մոտ ապագայում գիտությունը հնարավորություն կունենա ճանաչելու մի մտավորականի, որին սպասել ենք վաղուց: Իսկ մինչ այդ, ստորև, Ձեր քննարկմանն ենք ներկայացնում մի հատված նրա փիլիսոփայությանը և տնտեսագիտությանը առնչվող մի տեսական հետազոտությունից, որը, իմ՝ մտավորականի դատմամբ, բացառիկ է մարդկային հասարակությանը առնչվող կարևորագույն խնդիրների յուրօրինակ մեկնաբանմամբ:

Այս հեքիաթը շատ հին է, ավելի հին, քան ինքը մարդը: Ծնվել է իր երկվորյակի՝ Լույսի հետ, նախքան աստղերի ու մոլորակների շուրջապար բռնելը, Արարչության ամենաառաջին շնչով: Հետո թափառել են զույգերը երկար-երկար, աստղից աստղ, մոլորակից մոլորակ, մինչև որ հող ու ջուր են գտել երկիր մոլորակի վրա: Հանձնել է Լույսը Հեքիաթին Մայր հողին, որ սնվելով ջրով, բարձր ու խորխտ Սոսի մի ծառ է դարձել և դրա տերևների Սուրբ Սոսափյունը պատմել է Հեքիաթը իր սովերի տակ քնած Մարդուն: Ընդունել է Մարդը Հեքիաթին, տեղավորել իր սրտի ամենագաղտնի, սուրբ անկյունում և քայլել ժամանակի արահետով, ճանաչողության բարդ ու մութ անտառում: Միասին են կառուցել խրճիթն իրենց առաջին, տնկել խաղողի այգին ու ծոնել աստվածների գոհուության կարմիր գինին: Միասին են ուրախացել հաջողություններով և կիսել են դառը օրերը: Պատասպարել է Մարդը Հեքիաթին ոսկեգոծ պալատների գայթակղություններից, ստրկատիրոջ մտրակի հարվածներից, թույլ չի տվել, որ թառամի գործատուների միալար աշխատանքից: Այն սուր զենք է դարձել մարդու ձեռքին, երբ ելել է պաշտպանելու զավակներին, խըրճիթն իր ու խաղողի այգին: Եվ երբ ընկել է Մարդը անհավասար կռվում, իր կյանքի ամենավերջին ակնթարթին, մտքի մի հզոր թռիչքով հասցրել է պատմել Հեքիաթը իր միակ ժառանգին: Ու անցել է Հեքիաթը սերնդեսերունդ, մինչև եկել է ու հասել մեզ, և մենք, տանելով այն ճանապարհի մեր բաժինը, երբ կինչի ժամը մեր, համաձայն Տերունական աղոթքի, թե տուր մեզ գպարտիս մեր, որպես և մենք թողունք մերոց պարտապանած, կհանձնենք մեր ժառանգներին, որպեսզի տանեն Հույսով՝ որ Տեղ Կհասանեն, Հավատով՝ թե Բարի է Նպատակը և Սիրով՝ որ ուղեցույց Լույս կլինի, որ երբ մոլորվեն ճանաչողության մութ անտառում, հանկարծ ետ չչրջեն հայացքն իրենց, մինչև որ վերջինները՝ Ընտրյալները, հավաստի գիտելիքի վերջին կաթիլը կավելացնեն ճանաչողության ընդհանուր գավաթին, վերջին օղակը կանցկացնեն ժամանակի մեծ շղթային և դրանով կբարձրանան ճանաչողության Արարատի բաղձալի գագաթը: Մարդը տեղ կհասնի և կհաղորդակցվի Մեծ Նպատակին:

Անմահության խնճորի Հեքիաթն է, Մայր Հեքիաթը բոլոր հեքիաթների:

Եվ ինչպես բոլոր հեքիաթներում, այս մեկն էլ բացառություն չի կազմում, կար-չկար մի Թագավոր կար, ծեր էր, շատ ծեր և հետևաբար կյանքի մեծ փորձ ուներ: Իր երկար ու ձիգ տարիների ընթացքում կարողացել էր խորապես ճանաչել մարդ արարածին, այդ պատճառով սիրում և հարգում էր աշխատասեր, ստեղծագործ, բարեգործ մարդուն և որքան որ հարգում էր նրան, ավելի շատ սարսափում ու վախենում էր ծույլ, գող, խաբեբա, չարագործ մարդուց: Մի փորձանք պատահեց այս բարեգործ մարդու գլխին՝ մտահոգությունը սողոսկեց միտքը նրա, ու հիվանդացավ Թագավորը: Նրա մի աչքը ծպտում էր բարի, իսկ մյուսը ողբ ու կոծի մեջ լալիս էր անընդհատ: Շատ իմաստուններ այցելեցին նրան, քննեցին ու խորհուրդ արին, բայց չգտան ճարձք ծեր Թագավորի հիվանդության:

Մի գիշեր, երբ քնած էր ողջ աշխարհը, Մեծ Երազը այցելեց նրան: Սպիտակամորուս մի ծերունի էր՝ մտահոգ հայացքով, ասաց, որպեսզի բուժվի Թագավորը, բարեգործ մարդը պիտի

հաղթի իր մեջ նստած չարագործին, իսկ դրա համար անհրաժեշտ է գտնել և բերել Անմահության խնճորը ու բաժանել բոլոր մարդկանց միջև: Որտեղ գտնել խնճորը և Ի՞նչ համամասնությամբ բաժանել այն մարդկանց միջև՝ ծերունին ոչինչ չասաց: Ծեր Թագավորն էլ չհարցրեց, որովհետև Մեծ Երազը հարցերի չի պատասխանում, նրանն է իրավունքը, նա է ընտրում մարդուն և պատգամում:

Առավոտ լուսու, Արեգակին Արդար կանչեց ծեր Թագավորը իր զավակներին: Երեք տղա ուներ, մեկը մեկից Իմաստուն: Եկան, կանգնեցին Հոր առջև և խոնարհվեցին: Հանեց Թագավորը մտահոգությունը մտքից, հանձնեց տղաներին և փոխանցեց նրանց Մեծ Երազի Պատգամը: Ժամանակի անդարձելիության անխախտ օրենքի համաձայն, ավագության կարգն էր, անդրանիկ տղան էր, հազավ իր պատերազմի արմազույն զգեստը, կապեց թուրը կայծակե, հեծավ իր կարմիր ձին ու ճանապարհ ընկավ: Շատ գնաց, քիչ գնաց, շատ արկածներ ունեցավ, պատերազմներ մղեց, հաղթանակներ տարավ, բայց վերջում չարաչար պարտվեց և ստրուկ եղավ, մտրակի հարվածներ ստացավ՝ մարմինը ցավեց ու ճորտ եղավ, անպատվություններ կրեց՝ հոգին ցավեց, գործատուներում մի փոր հացով աշխատեց՝ միտքը ցավեց: Ու փոխվեց, աղավաղվեց հոգին, դաժանացավ: Բայց քանի որ Ազատություն ու Արդարություն էր փնտրում, փախավ, քայլեց, յոթ սար անցավ, յոթ ծով անցավ ու եկավ հասավ մի ճամփաբաժանի: Իմաստության ճամփաբաժանն էր, ուր Իմաստության քարին մի ծերունի էր նստած: Ռազմի հազուստ կար հազին, դաժան հայացք ուներ, իսկ աչքերը անկեմդան սպիտակ էին, կարծես անձայր սառցադաշտեր լինեին:

- Ի՞նչ ես փնտրում, - երկաթյա ձայնով հարցրեց ծերունին:
- Անմահության խնճորը, ծերուկ:
- Անմահության խնճորը ծառից կարող է քաղել միայն նա, ով գիտե ինչպես այն Հավասար Բաժանել մարդկանց միջև, - ասաց ծերունին և նրան մի խնճոր մեկնեց: Տղան խնճորը դրեց գրպանը, ուզում էր ասել, թե ինքը կորոշի՝ ինչպես բաժանել:
- Ծերունու աչքերի սպիտակ սառցադաշտը կարմիր գույնով ներկվեց, նրա աչքերից արյուն սկսեց կաթել:
- Պարզիր այս հանելուկը, և ես ցույց կտամ ճանապարհը: Ասա ինչո՞վ է պայմանավորված արյունքների արժեքը:
- Դրանից էլ հեշտ հարց: Այն պայմանավորված է դրանց արտադրության համար անհրաժեշտ աշխատանքի քանակով:
- Գնա ձախակողմյան ճանապարհով: Գնապարհին մի պատ կա, հասարակ պատ չէ, դրա քարերը իրենք իրենց աճում են և պատը բարձրանում է, սակայն պատը կառուցվածքի թերություն ունի, քարերը կռվում են իրար հետ, շահագործում միմյանց, պատը ճաքեր է տալիս, ծովում և ենթակա է քանդվելու: Դու պիտի լուծես պատի խնդիրը, պատը պետք է ուղիղ և արագ վեր բարձրանա, քանի որ պատի ետևում դև կա, կարմիր գույն ունի և անունն է կոնունիզով: Եթե պատը արագ չբարձրանա, դևը կանցնի պատը և կուտի քեզ:

Տղան քանդեց պատը, փոշիացրեց քարերը, դրանցից նոր, ուղիղ քարեր ձուլեց և պատը վերաշարելիս շղթափակեց քարերին պլանային տախտակներով, որպեսզի աճեն այնպես, ինչպես ինքն է ուզում, համաձայն իր կամքի: Սակայն պատահեց

անսպասելի, քարերը սառեցին, չէին ուզում աճել: Տղան համոզում էր նրանց, ոսկե սարեր էր խոստանում, նույնիսկ ոսկե գուգարաններ խոստացավ: Քարերը մի փոքր աշխուժացան, բայց հետո նորից սառեցին: Այնժամ տղան զայրացավ, հինքը տառապանքներ կրեց, արյուն թափեց, իսկ նրանք, ապերախտ քարեր: Տղան սկսեց դաժանորեն պատժել քարերին, աքսորում էր ամենացուրտ տեղերը, զնդակահարում էր անհնազանդներին: Քարերից սկսեց արյուն ծորալ, պատը ներկվեց կարմիր գույնով: Բայց քարերը մնացին անտարբեր: Տղան հասկացավ, որ սխալ է գործել, հեռացրեց պլանային տախտակները, ազատություն տվեց քարերին, սակայն քարերը մոռացել էին իրենց պարտականությունը, նրանք հարձակվեցին իրար վրա, յուրաքանչյուրը աշխատում էր խլել՝ ինչ կարող է: Սկսվեց թալանը: Կարմիր դևը անցավ պատը: Պայքարը կարճ տևեց, զարմանալիորեն կարճ: Տղան ընկավ:

Եկավ միջնակ տղայի ժամանակը: Նա հոր գանձարանից գրպանը լցրեց ոսկով ու արծաթով, վերցրեց իր փող հաշվելու հաշվիչները և ճանապարհ ընկավ: Ամենուրեք առևտուր էր անում, որպես կշռաքար աչ ուղքն էր օգտագործում, երբ գնում էր, սեղմում էր աչ ուղքով մտարին ինչքան կարող էր, երբ վաճառում էր, թեթևակի էր սեղմում մտարը, մարդիկ հավատում էին նրան, որովհետև քարետես էր և գեղեցիկ: Եվ երբ շատ ոսկի ու արծաթ կուտակեց, գործատուներ բացեց, շատ-շատերին տուն-տեղ դարձրեց, և սրանք օրհնում էին նրան, բայց շատ-շատերին էլ զրկեց վերջին պատառ հացից ու մուրացկան դարձրեց և սրանք էլ անիծում էին նրան: Հսկա ու փառահեղ շինություններ, տաճարներ կառուցեց ու բոլորը զարմանում ու զոհաբանում էին նրան: Կուտակման մոլուցքով տարված՝ մոռացավ տղան թագավոր Դորը: Եվ մի օր որոշեց հաշվել, թե ինչ ունի և չկարողացավ հաշվել, այնժամ որոշեց նայել, թե ինչ չունի ու սարսափահար ձեռքը խփեց ճակատին, հասկացավ, որ ամենակարևորը, որ ավելի արժեքավոր է, քան իր անհաշվելի ունեցվածքը, չունի՝ Ամսահույնը: Հիշեց թագավոր Դորն այնժամ, վերցրեց իր ամենաթանկարժեք գանձերը, ճանապարհի ցուլան առավ և քայլեց իր ավագ եղբոր ճանապարհով դեպի Իմաստության ճամփաբաժանը:

Իմաստության քարին նստած Ծերունին պերճ հագուստ ուներ հագին, շատ նման էր դրամավոխի, աչքերի մեջ բբերի փոխարեն կանաչ ոսկեդրամներ էին շողշողում:

- Ի՞նչ ես փնտրում, - շողջորթ ծայնով հարցրեց Ծերունին:
- Ամսահույնյան Խնձորը, պապիկ, օգնիր, - տղան մի պարթ թանկարժեք արձամանդ շաղ տվեց նրա ուղքերի տակ:
- Ամսահույնյան Խնձորը ծառից կարող է քաղել միայն նա, ով գիտե՛ ինչպես այն Հավասար Բաժանել մարդկանց միջև, - սասց ծերունին և տղային մեկնեց երկրորդ խնձորը:

Տղան ուղիղ երկու կես արեց խնձորը, մեծ կտորը դրեց գրպանը և փոքրը վերադարձրեց Ծերունուն:

- Պարզիր այս հանելուկը, սաս ի՞նչ օրենքով է պայմանավորված ապրանքների արժեքը և քոնն է ճանապարհը:
- Ասում են, թե ապրանքների քչությունն է պատճառը, եթե առատ լինեին, ապա արժեք չէին ունենա, դրա համար էլ աղամանողը շատ թանկ արժե, իսկ կենսական ջուրը ծրի է: Գիշտն սասծ ես գիտես, տղան գետնից մի խոշոր աղամանով վերցրեց, թե ինչու է այս ամպետը ապակու կտորը թանկ, այդ պատճառով էլ իմ համակրանքը նրանց կողմն է, ովքեր ասում են, թե արժեքը աշխատանքով է ստեղծվում, սակայն հարցը իրոք շատ բարդ է և չգիտեմ որևէ մեկին, որ կարող է հստակ պատասխանել հարցին: Դրա փոխարեն ես գորեղ սոսինձ ունեմ, կանաչ գույնի է, բարձր հոսունություն ունի, լցվում է բոլոր ճաքերը, միայն ափսոս, որ չի պնդանում: Բայց ինչ կարող ես անել, երկու երանի մեկտեղ չի լինում:

Տղան գնաց աջակողմյան ճանապարհով: Սկզբում նա չէր խառնվում պատի աճին, չէր միջամտում: Պատը քանդվում էր, նորից բարձրանում: Բայց երբ պատը շատ բարձրացավ, դրա քանդվելը դարձավ վտանգավոր: Տղան վերցնում է մեծ քարերից ու տալիս փոքրերին, որ մեղմացնի պատի քանդվելը: Սակայն մեծ քարերին դա դուր չէր գալիս և նրանք խեթ-խեթ էին նայում տղային, իսկ նրանց չի ուզում նեղացնի, որովհետև պատի աճի իր հույսը մեծ քարերն են, փոքրերը պատի աճի վրա ներդնելու հնարավորություն չունեն: Տղան առատորեն սոսինձ է օգտագործում, վազում է պատի մի ծայրից մյուսը և որտեղ որ ճաք է հայտնվում, սոսինձ է ներարկում: Պատը ծռվում է, բայց տղայի հոգսը այդ չէ, միայն թե չքանդվի: Երբեմն պատը արագ և ուղիղ բարձրանում է ու տղան փորձում է շունչ քաշել, հանգստանալ,

բայց այստեղ էլ նրան հանգիստ չի թողնում պատի ետևի վատնեմ անունով կանաչ դևը: Նա տղային ճարպոտ, համեղ ուտելիք, մերկ կանանց պատկերներ ու սպիտակ փոշի է նետում, որ տղան չաղանա ու թմրի: Կանաչ դևն էլ իր հաշիվները ունի, սարսափով է նայում իր կողքին սովից սնուցանող իր Կարմիր եղբորը, մեծ տղան չափից դուրս միտար էր եղել՝ կաշի ու ոսկոր, բայց ավելի է սարսափում, երբ նայում է պատի բարձրությանը, թե քանդվեց, բոլորին տակով կանի, տղային էլ, դևերին էլ, ոչինչ չի մնա: Համեմայն դեպս տղան ոչ մի տեղ էլ չի գնա, նախ պատը պահում է նրան և հետո էլ չգիտի, որ ճանապարհով գնա, ճանապարհները շատ-շատ են, տղան չգիտե՛ ինչպես ընտրություն կատարի:

Ծեր Թագավորը արցունքն աչքերին ճանապարհեց ամենափոքրին, որովհետև շատ ծեր էր ու էլ տղա չունեց: Իրոք անդարձելի է ժամանակը: Եթե մարդը սովորեր տեսնել ապագան: Վերջին հույսն էր: Սակայն ժամանակի անդարձելիության օրենքը չարիքի հետ բարիք էլ ունի: Չարիքն ու բարիքը հարազատ գույզներ են: Փոքր տղան գիտեր այդ գաղտնիքը: Բոլոր հեքիաթներում ամենափոքրերն են լուծում հանելուկները և հաղթում չար դևին: Որովհետև նրանց է տրված ավագների սխալներից սովորելու և սխալները ուղղելու իրավունքը: Եվ փոքր տղան վերցրեց իր ավագ եղբայրների գրած գրքերը ու կարդալով ճանապարհ ընկավ: Անցավ նրանց աշխարհներով, բայց չմտավ այնտեղ, դրսից մայեց նրանց աշխարհներին, որպեսզի տեսնի ու հասկանա սխալը: Քայլում էր ու ճանապարհի կեսից ետ էր վերադառնում, էլի առաջ էր գնում ու էլի վերադառնում և ամեն անգամ ավելի ու ավելի առաջ էր գնում, մինչև որ վերջապես հասկացավ, համոզվեց, յոթ անգամ չափեց ու նոր կտրեց և վստահորեն քայլերն ուղղեց Իմաստության ճամփաբաժանին: Իմաստության Բարին, սապատավոր, անապատի խորշակներ հիշեցնող կնճիռներով, ցնցոտիների մեջ Ծերունի էր նստած: Նրա աչքերի մեջ խորը անհանգստություն ու մտահոգություն կար: Տղան հիշեց Ծեր Դորն իր, նույն աչքերն էին վերջին հույսը:

- Ի՞նչ ես փնտրում, - հագիվ լսվեց Ծերունու մարդու ձայնը:
- Հավաստի Գիտելիքի Դաշտը, Տեր, - և տղան մինչև գետին խոնարհվեց:

Ծերունու աչքերում հույսի պայծառ շողը հայտնվեց:
 - Ամսահույնյան Խնձորենին միայն Հավաստի Գիտելիքի Դաշտում կարող է աճել, - ավելացրեց տղան:

- Ամսահույնյան Խնձորը ծառից կարող է քաղել միայն նա, ով գիտե՛ ինչպես այն Հավասար Բաժանել մարդկանց մեջ, - սասց ծերունին և տղային մեկնեց վերջին խնձորը:
- Խնձորը հավասար բաժանելու համար, անհրաժեշտ է դրա Աճը Հավասար բաժանել, - տղան վերադարձրեց խնձորը:
- Ծերունու սապատն անհետացավ, նրա կնճիռները ուղղվեցին:
- Պարզիր այս հանելուկը, սաս ո՞րն է արժեքի օրենքը:
- Արժեքի օրենքը նպատակների-շահերի գումարման օրենքն է, նույն օրենքը, որով կապված են ապրանքների-պահանջների-նպատակների օգտակարությունները:
- Որպեսզի պատի քարերը չպայքարեն իրար դեմ, համագործակցեն, անհրաժեշտ է նրանց շահերի բավարարումը կառուցել օգտակարությունների կապի օրենքի համաձայն: Այնժամ պատը կբարձրանա ուղիղ և արագացումով:

Ծերունին ակնհայտորեն երիտասարդանում էր: Ժամանակի անդարձելիության օրենքը կարծես թե շրջվել էր:

- Ուրեմն կլուծես Պատի խնդիրը: Իսկ գիտե՛ս՝ հետո որ ուղղությանմբ ես գնալու:
- Ես այդ խաղը մանուկ ժամանակ շատ եմ խաղացել: Երբ կապում են աչքերդ, ու ամբոխը ծայնում է տաք է, սառն է՝ հուշելով ճիշտ ուղղությունը: Այն, ինչ ավագ եղբայրս կարծում էր ավելորդ է, իսկ միջնեկը օգտագործում որպես սոսինձ, իրականում ժամացույց-կողմնացույց է և ինձ տեղ կհասցնի:
- Քայլիր, սակայն հիշիր, երբեք, ինչ էլ որ լինի, հայացքդ ետ չէրջես:

Տղան քայլեց, հետո հիշեց, միակ հարցը, որի պատասխանը ոչ ոք չգիտե: Թեպետ գիտեր որ Ծերունին հարցերի չի պատասխանում, բայց որոշեց հարցնել: Միգուցե բացառություն անի: Տղան չէրջեց հայացքը ու հարցրեց:

- Իսկ կտեսնեմ Քեզ այնտեղ, Ամսահույնյան Խնձորի Ծառի մոտ: Պատասխան չկար: Ծերունին անհետացել էր: Տղան նկատեց իր կողքին քայլող երեք զինակիցներին: Ծերունու հավատարիմ ծառաներն էին: Նա էր ուղարկել:

Լևոն ԶԱՎԱՍԵԱՆ

ՑԼԻԿԸ

Ցլիկ ախպերս, որ հունորից գուրկ չէ և լրջությունից էլ պակտորդ չունի, մի օր ինձ մի կողմ քաշեց ու կես լուրջ, կես կատակ ասաց՝ Լևոն, իմացել եմ որ իմ մասին բան ես ուզում գրես... Լսի, ասաց, ես ո՛չ նախագահ եմ, ո՛չ վարչապետ, ո՛չ քաղաքապետ, ո՛չ թաղապետ, ո՛չ նախարար և ո՛չ էլ օլիգարխ... Նաղդ գլուխդ եմ... Ասում էր կարճ մարմնի վրա գունջ գլուխը պոզահարելու պատրաստ, ու թվում էր, թե որ գրեցի ու գիրս թերթի տվի՝ նրանից էլ պոծում չկա: Համեմայն դեպս, իսպանական ցուլի պես մարտական կեցվածք էր ընդունել՝ ամեն պահի պատրաստ գրոհելու սրի փոխարեն իր դեմ գրիչ պարզած տորեադորի վրա: Նա Ցուլի աստղի տակ ծնված Ցլիկ էր, որը, սակայն, խիստ կասկածելի էր: Հատկապես վերջին ամուսնալուծությունից հետո այնպես էր չաղացել, որ ավելի շատ եզի էր նման, քան ցուլի: Առջևից փորն էր դուրս տնկած, ետևից՝ ոռը: Կինը նրա համար միայն կին էր և ոչ ավելի: Այնուամենայնիվ, յոթ ամուսնության ընթացքում երկու անգամ պլստացել էր ու երկու երեխա ունեցել: Իմ երեխաները, ասում էր, երկու անհաջող գիշերվա արդյունք են: Բայցևայնպես, իր ունեցած յոթ կանանց մեջ մեկը չեղավ որ երջանկություն բերեր: Նրա միակ հարստությունը շավարի մեջ էր: Ասեմք, երջանկությունը ի՞նչ էր՝ ակնթարթային ցանկություն, որին ամեն պահի կարող էր հասնել: Ամենաքաղցր հիշողությունը մնացել էր առաջին կնոջից, երբ առաջին անգամ քաղեց սիրո պտուղը: Բայց դա այնքան էլ հեշտ բան չէր: Ամուսնության առաջին գիշերը դա չստացվեց: Երկրորդ գիշերն էլ ապարդյուն անցավ: Երկուսս էլ խամ էինք, հետո հիշում էր, ես չորսանի պես առաջ էի քշում, նա կխտարի պես ետ էր փախցնում: Միայն երրորդ գիշերը իրար հասան: Էն ժամանակ էլ հո հիմիկվա ցուլը չէ՞ր... Մոզի էր, մոզի, անփորձ մոզի... Թերևս յոթ անգամ նա հասել էր իր նպատակին: Հասել ու հիասթափվել: Յոթերորդի հետ կարելի էր և ավելի հեռուն գնալ, եթե չլիներ զոքանչը: Կյանքում բազում չլուծված հարցեր կային, բայց նրա համար այդ պահին երջանկությունը մի ճանապարհ ուներ. «Որքան հնարավոր է զոքանչից հեռուն...»: Եվ թվում էր, որ դա այնքան էլ անհրազորօճելի չէր: Իր հոժար կամքով զոքանչին թոցրեց Մոսկվա՝ մյուս աղջկա մոտ: Ամեն դեպքում, ապահովության համար, երբ ինքնաթիռը օդ էր բարձրացել ետևից խաչակնքել էր. «Գնալդ լինի՞ գալդ չլինի...»: Բայց դա միայն սին ցանկություն էր, որն, ավաղ, դիպեկտիկայի հետ ոչ մի աղերս չուներ: Եթե գնալը կար՝ գալն էլ կար: Մի ամիս դեռ չանցած՝ բաշտաղը զանգեց, թե մայրիկը ձեզ կարոտնա՞ր՝ պատրասվե՞ք դիմավորելու: Ցլիկը, թե՛ ո՞նց... Բաջանաղը հանգստացրել էր, թե շատ մի անհանգստանա, մայրիկը սաստիկ ճնշում ունի, որ օդ բարձրացավ, էլ դժվար թե իջնի...

Ցլիկը սրտապնդված, ուրախ, զվարթ, ներկայացել էր օդանավակայան գոթանչի դին դիմավորելու: Բայց բախտը էդտեղ էլ էր իրենից երես թեթել: Ինքնաթիռի բացվող դռանից ժիր ծոփ պես դուրս էր թռել զոքանչը՝ դեմքը կլոր, կնճիռները հարթված ու թևերը հոլանի իր բալիկների ուղ-

ղությամբ պարզած... Էդ պահին ութուն տարեկանը ավելի շուտ ինքն էր և ոչ թե՛ զոքանչ մայրիկը: Ծարձ ի՞նչ... Օդանավակայանի հրապարակում մայթն անցնելիս քաղաքավարությունի՞ց, թե՛ կնոջը հաճոյանալու համար, մայրիկի արմունկից քընքուռ բռնեց: Ձոքանչը փեսայի օգնության կարիքը բոլորովին չուներ: Նրան արմունկով մի կողմ էր հրել ու տասնութ տարեկան աղջնակի թեթևությամբ սավառնել մայթեզրի քարաշարերի վրայով: Եստեղ Ցլիկի թուրը իսպառ էր չորացել: «Ես ագռավը, որ էսնեց թռավ սրան էլ բռնել չկա»,- կարելի էր կարդալ նրա կապույտ դեմքին: Եվ քանի որ ագռավները սովորաբար երեք հարյուր տարի են ապրում, մեր Ցլիկն էլ Լոռվա միամիտ Ռուբենը չէր, որ երեք հարյուր տարի սուտ ու փուռ համբեր էր ու սպասեր նրա վախճանին. էդ տանից էլ ինքն էր թռել՝ հայտնվելով Վերնիսաժի ազատ տարածքներում: Վերնիսաժում ի՞նչն էր բոլ՝ կսանիք, որ գալիս-գնում անց էին կենում՝ անես երագուն...

Փարիզը Փարիզ չէր լինի առանց Լուվրի: Այնտեղ ապրում է անցյալը: Երևանը Երեվան չի լինի առանց Վերնիսաժի: Այստեղ ապրում է ներկան: Այստեղ մարդկային ձեռքը հնարավորինս հասու է մարդկային մտքին: Արեգակի վաղորդյան շողերի ներքո աչքիդ առաջ, ասես ոտքիդ տակից, բսնում է հրաշքների հրաշքը՝ Վերնիսաժը. նկարներ, քանդակներ, փորագրություններ, զարդանախշեր, ասեղնագործություն, օբսիդիան, օնիքս, նեֆրիտ, ագաթ, խրիզոպրազ, ռոդոնիտ, բերիլ, ամետիստ, տոպազ, սուտակ, գնրուտ, աղամանդ, ոսկի, արծաթ, մասուրի, ուլունք, մարջան, ապարանջան... վախ, Ցլիկ ջան... Ես ի՞նչ դավմադավա...

Մինչև էդ կպարզվի, գալիս եմ ես: Շաբաթվա «գեներալի» այցս է: Արծաթափայլ սեղանիկների շարասյունը ընդունում է ողջույնս.

- Здравствуйте, товарищи! - պրկում եմ ձայնավարնս:

- Աու... աու... աու..., - բանակայինների նման ոռնում է արծաթագործների շարասյունը:

- Поздравляю вас с днем Великой национальной торговли! - շարունակում եմ ողջույնս:

- Ուռա՛..., - թնդում է Վերնիսաժը:

Էդպես Սովետի կարոտն եմք առնում՝ միաժամանակ ստեղծելով մեր ներկան: Հիշում եմ, առավել կարոտալին պանդուխտ ընկես էր ուտող-խմող Ալիկը: Քեֆը տռուզ, ցեբը լիքը, օրօրվելով գնում կանգնում է Արմյան փողոցում Վիսոցկու հանգույն խաչպոտ ձայնով երգ ասող մուրացկան բարդի առաջ ու հինգ հազար դրամանոցը դեմ տալով՝ հրամայում.

- Դավայ, Սովետի մարշը...

«Վիսոցկին» կարկամած նրան էր նայում ու ոչ ուզում էր հինգ հազարից հրաժարվել և ոչ էլ կարողանում էր իր կիթառը դուխավոյ արկեստրի վերածեր: Անկապ խոխոտացնում էր: Մինչդեռ, պատվարժան ընկերս արդեն իրեն պատկերացնում էր զորանոցում: Իսկ նրա թվատ ձայնը աղաղակում էր.

- Լավվյա՛ս... Սմիլնա՛...

Շքահանդեսը պատրաստ էր շքերթի: Այ,

միայն մարշն էր պակաս, մարշը...

- Ռամ, պամ, պամ, պամ, պապա, պապա, պա...,- այնուամենայնիվ, հույսը չկորցնելով՝ եղանակի մոտիվն էր հուշում պիանից զորականը:

Ականջդ կանչի, Ալիկ, հիմա ի՞նչ ես անում ռուսաստաններում... Էդպես էլ Սովետը մնաց այդ մեծ զորանոցում՝ իր իսկ մարշի փլատակներում: Հիմա գանք տեսնենք որտեղ մնաց մեր ախպեր Ցլիկը: Դալմադալի էպիկենտորոնը էլի ասեղնագործության հատվածն էր: Պառաված օրհորդը կրկին իր տարերքի մեջ էր: Նա էլ մեր «գավոդի» գուրդն է: Շաբաթ, կիրակի, ամեն Աստծո օր աշխատանքային ժամը սկսվում է նրա աղաղակից: Ամեհի կրծքով, խուճուճ մագերով, փափիկ, կլոր երեսով, տարիքն առած կին էր: Իր ասելով ողջ կյանքում տղամարդու երես չէր տեսել: Հիմա փոխը մեր ջանից էր հանում: Բռնկում էր և հուզական: Ամեն պարապ բանից կռիվ էր սարքում: Ասում էին՝ արյունը գլխին և խփել: Ձեռն ընկածին սեռական տեռորի էր ենթարկում: Էդ օրվա զոհը Ցլիկն էր: Արդեն բանը բանից անցել էր: Վերնիսաժի տնօրինությունից դիվանբաշի էին կանչել՝ պարոն Հայկազին: Նա թույլ, անվճռական մարդ էր, լուռ ու մունջ լսում էր մեկ մեկին, մեկ՝ մյուսին ու անկողմնակալ ճժբաշի պես ոչ մեկի խաթրին չէր ուզում կպած լիներ:

- Ես տիկնոջը վիրավորական ոչինչ չեմ ասել,- արդարանում էր Ցլիկը:

- Ըմ...,- իր սովորույթին համաձայն, երկու ձեռքերն առաջ պարզած՝ պառաված օրհորդի կողմն էր մեկնել պարոն Հայկազը:

- Տիկինը դու ես, հաստագլուխ,- փրփրել էր օրհորդը:

- Ըմ...,- մեկնած ձեռքերը Ցլիկի կողմը տարավ պարոն Հայկազը:

- Բա տի-տիկին չա-չասեմ ի՞նչ ասեմ..., - պապանձվել, կուռկուռի ձագ էր դարձել Ցլիկը:

- Ըմ..., - հիմա էլ ձեռքերը պառաված օրհորդի կողմն էին ուղղված:

- Բա ես տիկին եմ..., - ոնց որ երկրաշարժը՝ ցնցվում էր օրհորդը:

- Ըմ..., - ձեռքերը առաջ պարզած՝ չքմեղացել էր պարոն Հայկազը:

- Ես ի՞նչ իմանամ..., - բթացել էր Ցլիկը:

- Ըմ..., - մեկնված ձեռքերը նրա պատճառաբանությունն էին վկայակոչում:

- Իմ երակներում հոսում է առողջ, տնական արյուն... Տո տխմար, ես օրհորդ եմ, օրհորդ..., - հպարտ սարի պես իր բարձր կրծքերն էր ծծում անհույս օրհորդը:

- Ըմ..., - պարոն Հայկազը ձեռքերը թեթեց Ցլիկի կողմը: Այսինքն՝ թե, բա սրան ի՞նչ կասես...

- Հմի ի՞նչ անեմ, - մոլորվել էր Ցլիկը, - շուռ գամ սխալս ուղղե՞մ...

Էդ մեկը նախատեսված չէր: Դա արդեն չպիտի ասեր: Իսկական տեռորը հենց էդպիսի բաներից հետո է լինում: Օրհորդը մի պահ սսկվեց: Այդպես լինում է մեծ աղետից հետո: Մեկ էլ ոնց որ հանգած հրաբուխը՝ միանգամից տրաքեց... Քֆուր էր, թուր ու մուր, որ ժայթքում էին նրա երախից: Միաժամանակ տանկի պես սկսեց առաջանալ:

- Ցլիկ, - ասինք, - փախի...

Յիկը պոչը տնկեց ու պուկ, կետ արավ...
 - Բա մարդ էլ իր կլունձով ուրխանա՞...», -
 մինչև պառաված օրիորդը իր կուսություն-
 նով էր հպարտանում, քեռի Սիմոնը արդեն
 իր հիվանդության պատմությունն էր գել,-
 ադա, էս քանի տարի ա փորլուծով տառա-
 պում եմ, տնեցիք ինչ արին չարին չան-
 ցավ: Տղերք, ամոթ էլ ա ասելը՝ յոթ տարի
 ա ես իմ բաքը տեհած չկամ շվկցնում եմ,
 ոնց որ էն սև ջուրը... Ասին, հլա հմիկ էլ
 «Նարինե» օգտագործի: Ադա, էտ ի՞նչ դեղ
 ա... Ո՞ւմ մտքով կանցներ... Խմելուց մի շա-
 բաք հետո հրաշք կատարվեց, հրաշք...,-
 ուրխադ էր եղել քեռի Սիմոնը: Բարձր էլ
 պատմում էր, հայավարի, ասես էս մոլորա-
 կի բնակչից մենակ մենք լինենք: - Էրեկ
 էր՝ ուրբոնումը շուռ էկա տեհա, ի՞նչ տե-
 հա... կլունձ... Հա, հա, առողջ, կենդանի,
 կարմիր կլունձ, ոնց որ բարուրի էրեխա...
 Տղերք, բա մարդ էլ իր կլունձից ուրխա-
 նա՞... - ինքն իր պատմածից ուրախանում
 ու գարնանում էր Սիմոն քեռին:

Իսկ Յիկն արդեն եկել դիրքավորվել էր
 Սիմոնի դեմը՝ իր սեղանիկի առջև ու ճա-
 կատի ծոված քանքուլն էր կարգի բերում:
 Մատներին թքում՝ մագերը ճակատի վրա
 սեղմում էր, թքում՝ սեղմում էր, ոնց որ թքով
 մագ կպցներ... Եղ խելքով էլ գնացել էր
 կույս կպցնելու... Ասա՞ ի՞նչ գործ ունես
 կույսերի հետ, ի՞նչ է, քո դեմով կաքավող
 կնանիք պակա՞ս են... Հազած, կապած,
 աչքերին սուրմա քաշած, սիրուն, մախ-
 շուն, գարդարուն, բարիաչողունը տեղը,
 ծոցերն էլ լիքը ծաղիկ: Քաղի, թե տղա-
 մարդ ես... Յիկն էլ բա ինչի՞՞ համար է:
 Կարևորը, որ դու չես գնում նրանց մոտ,
 իրենք են գալիս: Նրանք ապարանքին են
 մայում, դու՞ իրենց: Իրենք մայում են, թե
 որը գնեն կան չգնեն, դու մայում ես, թե
 ոնց անես, որ գնեն: Իսկ Յիկը մի բան
 ավել է մայում: Եղ ամեն ինչից գատ, նրան
 հետաքրքրում էր՝ տվող ա, թե՞ չտվող:
 Ասենք, տվողների նկատմամբ նա առանձ-
 նապես վատ կարծիքի չէր: Ընդհակառա-

կը, ասում էր. «Աստված տվողին ա տա-
 լիս...»: Նրանք էլ որ չլինեին ինքն ո՞ւմ էր
 պետք: Նույնպիսի սիրով հաճոյանում էր
 պրոֆեսիոնալներին: Նրանց, որ տրասի
 վրա երկար սպասելուց հետո ի վերջո
 մուտք էին գործում վերնիսաժ՝ արծաթ-
 չարծաթի հետ բարտերի մի վերջին հույ-
 սով: Յիկը մի մատանի էր մտցնում մատ-
 ներն ու սկսում բազարը: Սուբլիմացիան
 նրա մարմնականոն այնքան էր առկա, որ
 հաճախ սեռական էներգիան վեր էր
 ածվում հոգևորի՝ նրան մղելով բանաս-
 տեղծական վերթալուսների: Սովորաբար
 գործն առանց լիրիկական գեղունների
 գլուխ չէր գալիս: Դրանք փոքրիկ սյուժեով
 համեմված գողտրիկ ստեղծագործու-
 թյուններ էին. ես մի տիկնոջ առնա մի օր/
 Համոզեցի՞ տարա մի ձոր./ Բայց նա սկեց
 հետս վիճել./ Որովհետև փողս քիչ էր...
 Դոփում էր պոետի սիրտը: Երբեմն էլ
 գործը գլուխ էր գալիս էնպիսի կայծակ-
 նային արագությամբ, որ երկու անպա-
 ճույն տողն էլ բավական էր ներկայացնելու
 համար սրընթաց ավարտը. Առավոտյան
 ծանոթացանք փողոցում./ Երեկոյան նա
 հայտնվեց իմ ծոցում...
 Պետք է նշեմ, որ այդ անկորուստ հանդի-
 պումը տեղի էր ունեցել Կայֆահովիտում:
 Կայֆահովիտը փոքրիկ մի թաղամաս էր
 քաղաքին մերձ ձորահովիտում: Էնտեղի
 կանանց մի զգալի մասը զբվաղված էր
 միևնույն հանրօգուտ գործունեությամբ՝
 սեր էին վաճառում: Էնտեղ գնալը բոլորո-
 վին էլ պլան քաշել չէր: Դա մի ուրիշ կայֆ
 էր: Դրա տեղը լավ գիտեր Յիկը, որի հա-
 մար էլ ձորահովիտն այդ չքմաղ կոչել էր
 Կայֆահովիտ: Այցելությունը փոխադարձ
 էր: Մի օր նրանցից մեկը բարիտաղան-
 կան նպատակներով եկել էր վերնիսաժ:
 Ես ցուրտ ծնովա կեսին հագել էր բարակ,
 թավշյա ռետուզ, որը թափանցիկ գրկում
 էր երկու բռաչափ տուտուզիկը: Նիհար,
 երկար ոտքերին քաշել էր մինչև ազդրե-
 ռը հասնող երկարաձիտ սապոգներ, իսկ

ուսերին զցել էր սպիտակ կիսավերարկու:
 Աղջիկը ո՞րն է, ոնց որ իսկական Դարտան-
 յան: Ասինք, ամոթ չի, բա քո արածը արա՞ծ
 ա... Սեզ աչքով արեց ու Յիկին ցույց
 տվեց, սաաց. «Նրա արածն ա արած»... Հե-
 տո շուռ եկավ մեզ, թե խի՞, դուք սո՞ւրբ
 եք... Դուք, որ ամեն օր ստում եք ձեզ թվում
 է, թե Աստծո պատվիրանները չեք դըր-
 ժո՞ւմ... Ձեզ ի՞նչ, թե ես Աստծո որ պատ-
 վիրանը կխախտեմ... Թե՞ շնանալն ավելի
 մեծ մեղք է, քան այն, որ դուք ամեն օր եք
 անում... Բա էս էլ որ չանեմ, իմ եթիմ էրե-
 խանցը ո՞նց պահեմ...
 - Դու Աստծուն հավատո՞ւմ ես, - հետա-
 քրքրվեցինք:

- Ես Աստծուն հավատում եմ, - ասաց,- բայց
 ուզում եմ, որ Աստված էլ ինձ հավատա:

Նրանց Յիկն էր հասկանում: Նրանց
 հասկանալը մեր գաղափարից դուրս էր:
 Դրա համար էլ Յիկի վաստակը գնահատ-
 վեց ըստ արժանավույն: Մի օր էլ Կայֆա-
 հովիտից վերնիսաժ մի քանի եղպիսի
 մուշկիտորներ եկան, Յիկի թևներն ըն-
 կան ու տարան իրենց կոլխոց: Հետո ին-
 քանք, որ պաշտոնի բարձրացում էր տեղի
 ունեցել: Յիկին կարգել էին Պապա Տյուլ-
 պան: Այլևս նա էր հանրապետությունում
 մարմնավաճառ կանանց մատակարարը:
 Բայց Յիկը վերնիսաժը չլքեց: Վերնիսաժը
 մի այնպիսի վայր է, որտեղից թեկուզ թա-
 գավոր էլ օժեն էլի շաբաթ, կիրակի պիտի
 գաս քո տեղը կանգնես: Դրանից էլ լավ
 գո՞րծ. հինգ օր թագավոր կլինես՝ շաբաթ,
 կիրակին էլ վրեն քյար... Հետո... էլ ի՞նչ հե-
 տո՞ պատմվածքս պրծավ: Հիմա նստած
 թախտին՝ սպասում եմ նրա գյուլին... Ես էլ
 պակաս մագալուն չեմ... Նաղդը թողած ըն-
 կել էմ Ռիսիան ետևից: Նաղդը՝ էս է, որ կա,
 - կասեր Թունանյանը, - թատյ բեր... Դեմը
 Նոր տարի է: Մատանի ծոցը Յիկի գյուլեն:
 Ես ավելի լավ սպասելիքներ ունեմ: Մենք
 ապրում ենք մի երկրում, ուր տխրություն-
 ները միշտ մեզ հետ են: Միգուցե ա՞յս Նոր
 տարին ուրախություն բերի...

ՄԻԼԻԱՐԴԱՏԵՐԵՐԸ

Ըստ «Ֆորբս» հրատարակության հաշվարկների, վերջին տարում
 աշխարհում միլիարդատերերի թիվն ավելացել է 102-ով և հասել
 793-ի, իսկ նրանց միագումար կարողությունն աճել է 18 տոկոսով՝
 մինչև 2,6 տրիլիոն դոլար: Ամենա-ամենա հարուստների ցուցակի
 առաջին երկու հորիզոնականները պահպանել են ԱՄՆ-ի քաղա-
 քացիները՝ «Մայքրոսոֆտ» ընկերության ղեկավար Բիլ Գեյթսը, որի
 կապիտալը վերջին տարում 46,5 միլիարդ դոլարից աճել է մինչև
 50 միլիարդի, և ներդրող Ուորեն Բաֆետը, որի կարողությունը 44
 միլիարդ դոլարից նվազել է 42 միլիարդի: Երրորդ տեղ է բարձրացել

հեռահաղորդակցության մեքսիկացի մագնատ Կառլոս Սլիմ Էլուն՝
 30 միլիարդ դոլար, չորրորդ տեղում է ԻԿԵՆ կահույքի խանութների
 ցանցի հիմնադիր շվեդ Ինգվար Կամպարդը՝ 28 միլիարդ դոլար,
 հինգերորդը՝ պողպատածուլական կայսրության սեփականատեր
 հնդիկ Լաքշմի Միթալն է՝ 23,5 միլիարդ դոլար, վեցերորդը՝ Գեյթսի
 գործընկեր Թիմ Ալենը՝ 22 միլիարդ դոլար: Յոթերորդ հորիզոնակա-
 նում հաստատվել է «Լուի Վուլտոն» և «Քրիստիան Դիոր» ընկերու-
 թյունների ղեկավար ֆրանսիացի Բեռնար Առնոն, ութերորդում է
 սաուդյան արքայազն Վալիդ բեն Թալալ ալ Սաուդը՝ 20 միլիարդ դո-
 լար, իններորդում կանադացի հրատարակիչ Քենեթ Թոմսոնն է՝
 19,6 միլիարդ դոլար: Առաջին տասնյակը եզրափակում է Հոնկոնգի
 մի շարք կոնցեռնների սեփականատեր Լի Կաշինը՝ 18,8 միլիարդ:

ՄԵՐՆ ՈՒՐԻՇ Է

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՄԵՆԹԱԼԻՏԵՏ

Ի՞նչ տարբերություն արևելյան և արևմտյան մենթալիտետների միջև:
 Այս հարցի պատասխանը հրաշալի ներկայացրել է ամերիկյան «Ֆորբս»
 ամսագիրը:
 Ավելի միշտ, «Ֆորբսը» տեղեկություններ է հրապարակել այն մասին,
 թե ինչպիսի ավտոմեքենաներ են նախընտրում աշխարհի ամենա-
 հարուստ գործարարները:
 Որքան էլ տարօրինակ թվա, այսօրվա գերմիլիարդատերերը բավական
 համեստ մեքենաներ են վարում: Մասնավորապես, աշխարհի ամենահա-
 ռուստ մարդը՝ «Մայքրոսոֆթ» ընկերության հիմնադիր Բիլ Գեյթսը, որի կարո-
 ղությունը այսօր գնահատվում է 50 միլիարդ դոլար, անձնական օգտագործ-
 ման երկու ավտոմեքենա ունի՝ 1991թ. թողարկման «Պորշե 911» և 1988թ.

«Պորշե 959»: Երկու ավտոմեքենաներն էլ համարվում են միջին կարգի և
 հասանելի են միջին կարողությունների տեր մարդկանց: Ի դեպ, «Պորշե
 959»-ն է վարում «Մայքրոսոֆթի» մյուս հիմնադիրը՝ Փոլ Ալենը (22 մլրդ դո-
 լար), որը նաև վարում է 18 տարվա «Մագադա պիկապո»: Իսկ «Մայքրոսոֆթի»
 մյուս հիմնադիր Սթիվեն Բալմերը չնայած իր ունեցած 13,6 մլրդ դոլարին,
 ընդամենը մեկ մեքենա ունի՝ 1981 թվականի «Լինոլոն Կոնտինենտալ»:
 28 մլրդ դոլարի կարողություն ունեցող շվեդ գործարար Ինգվար Կամպար-
 դը ընդամենը մեկ մեքենա ունի՝ «Վոլվո 240 GL» (1993թ.): Դա ընդհանրապես
 ժողովրդական մեքենա է համարվում: Չնայած ինքը՝ Ինգվար Կամպարդը,

Պարզաբանում... զգուշացնում է մեր Խորեն Գասպարյանը

Ինչպիսի՞ն է ճշմարտության դեմքը

Ճշմարտությունը որոնող մեկը, շրջելով ամբողջ աշխարհում, ոչ մի տեղ չի կարողանում գտնել այն: Օրերից մի օր, երկար դեգերումներից հետո, արևելյան մի գյուղ է մտնում: Եվ հանկարծ տեղեկանում է, որ ճշմարտությունն այդ գյուղի փոքրիկ վանքում է գտնվում: Քահանան ուղեկցում է նրան վանք ու ցույց տալիս սավանով ծածկված մի արձան. «Ահա ճշմարտու-

թյունը»: Երբ նա սավանը վերցնում է՝ Փնտրողը սարսափում է տեսածից. «Միթե՞ սա է ճշմարտությունը՝ այսքան սահուն կելի»: Արձանն այդ ժամանակ լեզու է առնում ու ասում. «Ես եմ»: «Բայց ես ինչպե՞ս պատմեմ քո մասին. կհավատա՞նք արդյոք»: «Ստիպված պիտի ստես, որ հավատան», - ասում է լեզու առած արձանը: Որ այս ավանդապատումն ունի բարոյա-

խրատական իմաստ՝ հասկանալի է բոլորին: Չմեկնաբանենք, քանզի պարզ խոսքն ասում են... գիտենք ում: Բայց նշենք, որ ճշմարտության սարսափելի դեմքը «տեսած շատերին իրոք չեն ուզում հավատալ, մինչև նրանք չեն ստում: Ի՞նչ արած, ընդունենք ի գիտություն և ասենք. «Երանի՛ նրանց, ովքեր ասում են այն, ինչ տեսել են և երանի՛ հավատացողներին»:

Զգուշացե՛ք համառ հիմարներից

Իզուր չի ասված՝ համառ հիմարը հիմար համառ է: Աստված հեռու տանի մանկներից: Եվ վայճրան, ով կփորձի այդպիսիներին բան հասկացնել. ծիծաղելի վիճակի մեջ կընկնի պարզապես: Այդպիսիներին բան հասկացնել ոչ թե դժվար, ուղղակի անհնար է: Մեր իրականությունը, մեր միջավայրը «աղքատ չէ» այդ հարցում. համառ հիմարները չասենք շատ են, բայց քիչ էլ չեն: Մեկ էլ տեսար՝ համառորեն այնպիսի մի բան պնդեցին, ինչի

մասին գաղափար իսկ չունեն, և այնքան կրքոտ համոզվածությամբ, որ իրավացի լինելով հանդերձ՝ կասկած ու տարակուսանք են ապրում «Միթե՞ ես եմ սխալվում»: Այդպիսիները սկին կարող են սպիտակ ասել, սպիտակին՝ սև: Ու անօգուտ է հակառակը պնդելը, ապացույցներ ու փաստարկներ բերելը: Նյարդեր ու առողջություն են պետք... Ինչպես մեր գործընկերներից մեկն ասաց՝ անհնար է քառակուսի անիվները գլորել:

Բայց մյուս կողմից՝ հո չե՞ս կարող լռել և դրանով իսկ այն տպավորությունն ստեղծել, թե ճշմարիտն ու իրավացին նա է՝ համառ հիմարը: Ո՞րն է ելքը: Պարզապես խուսափելը, զգուշանալը, ինչպես ասում են՝ բանի տեղ չդնելը: Եթե կարող ես: Մի խոսքով՝ զգուշացե՛ք համառ հիմարներից: Տառապանքս փորձ ունի...

Դե իսկ Արամայիս Սահակյանը կես լուրջ, կես կատակ հիշեցնում է

ՀԻՇԻՐ՝ ՈՐՏԵՂ ԵՄ, ԻՆՉ ՊԻՏԻ ԱՆԵՍ

Ուսանողներիս, երեխաներիս՝ կը ամեն մեկին՝ խորհուրդ եմ տալիս. - Որտեղ էլ մեկնես, ու՛ր էլ որ լինես Յիշի՛ր՝ որտեղ ես, ինչ պիտի անես: Եթե ծնվել ես ու աշխարհ եկել, Ուրեմն՝ ունես կարևոր մի դեր: Թանկ ժամանակդ իզուր չսպանես - Յիշի՛ր՝ որտեղ ես, ինչ պիտի անես: Եթե ունակ ես՝ օգնելու համար, Ուրեմն՝ զուր ես ժամանել աշխարհ, Ամբողջ աշխարհում՝ կարիքներ պես-պես - Յիշի՛ր՝ որտեղ ես, ինչ պիտի անես:

Յագար վտանգ կա արևի ներքո, Շշմած մի՛ անցիր ճանապարհը քո: Եթե քառս է շուրջդ մշտապես - Յիշի՛ր՝ որտեղ ես, ինչ պիտի անես: Շեղվելը հաճախ թվում է օգուտ, Օգուտ է թվում և խոսելը սուտ, Բայց միշտ էլ ճի՛շտն է սատարելու քեզ - Յիշի՛ր՝ որտեղ ես, ինչ պիտի անես: Գայթակղվելը հեշտ է և դյուրին: Կհաղթես, եթե հաղթես կրքերին: Նույնիսկ՝ երբ կյանքիդ ավարտին հասնես - Յիշի՛ր՝ որտեղ ես, ինչ պիտի անես:

Ամեն մարդու կյանք՝ մի վայրկյան է լույս, Բայց ընկալու՞մ ենք այդ վայրկյանն արդյոք: Այն աշխարհում էլ թե հանկարծ լինես - Յիշի՛ր՝ որտեղ ես, ինչ պիտի անես: Բայց որ չհնչի խոսքս խրատով, Ուզում եմ վերջում ասել ժպիտով. - Երբ սիրածիդ հետ առանձին լինես - Յիշի՛ր՝ որտեղ ես, ինչ պիտի անես:

310 ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՄԵՆԹԱԼԻՏԵՏ

հագվադեպ է իր մեքենան վարում. նա նախընտրում է աշխատանքի գնալ ավտոբուսով: Մրանք՝ արևմտյան քաղաքակրթության ներկայացուցիչներ են: Արևելյան մենթալիտետի ակնհայտ կրող է, օրինակ, Սաուդյան Արաբիայի թագավորի զարմիկ, արքայազն Ալվալիդ Բին Թալալ Ալ Սաուդը (20 մլրդ): Վերջինս այս պահին ունի «Ինֆինիտի FX45», «Յամմեր», «Վոլվո XC90», «Ռոլս-Ռոյս Ֆանտոմ» մակնիշի նորագույն ավտոմեքենաներ: Ընդ որում, արաբ արքայազնը յուրաքանչյուր նոր ավտոմեքենան երկու օրինակից է գնում: Մեկը ինքն է վարում, մյուսը՝ թիկնազորը: Ինչ վերաբերում է Յայաստանի մեծահարուստներին, ապա նրանք այսօր հաստատ նույնիսկ ուշադրություն չէին դարձնի Բիլ Գեյթսի կամ Ինգվար Կամարոդի մեքենաների վրա: Իրենց մեքենաները թե կարգով, թե գնով, թե «պրեստիժի» մակարդակով «ծալած» ունեն Բ. Գեյթսի «Պորշեին»: Մասնավորապես, Յայաստանի թերևս երկու ամենահարուստ մարդիկ՝ Ռ. Քոչարյանը և Մերժ Սարգսյանը գնել են երկու գրահասարակ ավտոմեքենա՝ «Մերսեդես» և «Բրաբուս» մակնիշի, որոնցից յուրաքանչյուրի արժեքը կազմում է 500 հազ. դոլար: Քոչարյանի թիկնազորի պետը՝ Գրիշա Սարգսյանը, գերադասում է վարել ավելի համեստ ավտոմեքենա՝ նորագույն սերնդի «Մերսեդես 600» մակնիշի, որի գինը սկսվում է ընդամենը 90 հազ. դոլարից:

Ակնհայտորեն Բիլ Գեյթսից ամաչելու պորբլեմ չունեն նաև մեր կառավարության անդամները, խորհրդարանի պատգամավորները: Ավելի շուտ Բ. Գեյթսը պետք է ամաչի, օրինակ, ՅՅ տրանսպորտի նախարար Անդրանիկ Մանուկյանից, որը թաշկինակի պես իրար հետևից փոխում է իր մեքենաները: Մեր հիշողության մեջ այդ ավտոմեքենաներից տպավորվել են «Բրաբուս», «Յամմեր», իսկ այժմ արդեն «Մերսեդես 600» մակնիշի մեքենաները, որոնցից յուրաքանչյուրի գինն էլ է սկսվում 90-100 հազ. դոլարից: Մեր կառավարության նախարարների գերակշիռ մասի մոտ հիմնականում այժմ մոդա են «Տոյոտա Լանդ Քրաուզեր», «Պրադո» և «Լեքսուս» մակնիշի մեքենաները, որոնց գինը սկսվում է 70 հազ. դոլարից: ՅՅ գլխավոր դատախազ, «Նիգ-Ապարան» հայրենակցական միության պատվավոր նախագահ Աղվան Գովսեփյանը արդեն մեկ տարի է, ինչ Յայաստան աշխարհը՝ Մեդրիդի մինչև Արագած լեռ, տեսնում է 110-120 հազ. դոլար արժողության «Ֆոլքսվագեն Ֆանտոմ» մակնիշի ավտոմեքենայի մզացված ապակիներից: Իսկ հայ մեծահարուստներից ամենաթանկարժեք մեքենան պատկանում է Աժ պատգամավոր Խաչատուր Սուքիասյանին: Վերջինս մի քանի տարի առաջ մոտավորապես 450 հազ. դոլարով գնեց «Ռոլս-Ռոյս Ֆանտոմ», որից, ինչպես արդեն նշեցինք, ունի նաև Սաուդյան Արաբիայի արքայազնը:

ԴԵԺԱ ՎՅՈՒԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Մարդկային հոգին կարող է ճանապարհորդել ժամանակի միջոցով

Մեզանից յուրաքանչյուրին կյանքում թեկուզ մեկ անգամ այցելում է այդ անսպասելի տարօրինակ զգացումը: Տեսնելով ինչ որ բան, մենք հանկարծ գիտակցում ենք, որ դա ինչ որ ժամանակ արդեն եղել է. այստեղ ես արդեն եղել եմ, նույն բանն արել եմ, լսել եմ նույն բառերը, լույսն էլ նույն ձևի էր ընկնում և այլն: Մի փոքրիկ ակնթարթում ուղեղը մեզ ազդանշան է տալիս, որ տեղյակ է կատարվածի մասին: Այս ֆենոմենն ստացել է դեժա վյու (*deja vu*) անվանումը, ինչը թարգմանաբար նշանակում է «արդեն տեսնված»: Ինչպե՞ս են մարդկանց մոտ առաջանում հիշողություններն ապագայի մասին:

Կանխագուշակող երազներ

Հին հունական ժամանակների տարբերություններում, քրոնիկոններում, գրական և իմաստասիրական աշխատություններում, գրում է «Կոմսոմոլսկայա պրավդան» արձանագրված են հազարից ավելի մարդկանց պատմություններ, ովքեր հանկարծ իրենց տեսել են բոլորովին այլ տեսքով և ուրիշ դարաշրջանում: Ընդ որում նրանք հաճախ այնպիսի մանրամասներ են ներկայացրել, որոնց մասին պարզապես չէին կարող իմանալ, եթե դրանք տեղի չունենային իրականում: Բայց այս անսովոր երևույթը բացահայտել ու նկարագրել, ինչպես նաև 1900 թվականին նրա համար անվանում է հորինել ֆրանսիացի բժիշկ Ֆլորենս Անոն: Հենց նա էլ սահմանել է, որ այդ ֆենոմենը առկա է ոչ միայն տեսողական զգացողություններում: Այն կարող է ընդունել *deja senti* (արդեն լսված) կամ *deja lu* (արդեն ընթերցված) կամ *deja eprouve* - ի (արդեն փորձված) ձևեր:

Դեժա վյուի դրսևորումների մեծամասնությունն այնքան տարօրինակ են, որ անհնար է բացատրել: Ինչ-որ մեկը հավատում է երազների կանխագուշակումներին, երբ, սնոտիապաշտների կարծիքով, նրանց հոգին արագորեն «գործողվում» է դեպի անցյալ. նա ամեն ինչ տեսնում և փորձում է: Իսկ երբ մի քանի օր հետո կամ էլ նույնիսկ տարիներ անց այդ երազները իրականանում են, նրանք զարմացած «իմանում են» անծանոթ իրավիճակը: Այդպես կանխատեսումը վերածվում է հիշողության: Ուրիշները «նախնիների ժառանգական հիշողության» դեմ են մեղանշում, որոնք արթնանում են ուժեղ հույզերի ազդեցությամբ:

Չուզահեռ աշխարհ

Ռեինկարնացիայի (հոգու վերաբնակում) տեսության կողմնակիցների հա-

մար դեժա վյուն ևս մի վկայություն է նրանց՝ նախկինում երկրի վրա գտնվելու:

Օրինակ, Պյուբագորասը ենթադրում էր, որ նախկին կյանքում ինքն աքլոր է եղել: Սիլվեստր Ստալոնեն համարում է, որ ինքը նախկինում քոչվոր ցեղի դիտապահակ է եղել: Քիանու Ռիվզը, իր իսկ հավաստիացմամբ, նախկինում բանգոկյան տաճարի պարուհի է եղել: Նրանց դեժա վյուն հաստատվել է հիպնոսի օգնությամբ, ինչը նրանց հնարավորություն է տվել էքսկուրս կատարել դեպի սեփական անցյալը:

Շվեյցարացի մեծ հոգեբան և իմաստասեր Կարլ Գուստավ Յունգին այդ զգացողությունն առաջին անգամ այցելել է տասներկու տարեկան հասակում: Եվ այն ժամանակվանից նա մշտապես համոզված է եղել, որ ինքն ապրում է զուգահեռ կյանքով և մասամբ ապրում է 18-րդ դարում: Դեժա վյուի դեպքեր են նկարագրել գրողներ Ջեյ Լոնդոնը և Արթուր Կոնան Դոյլը:

Դեժա վյուի հակառակ օրինակ է, այսինքն՝ ապրածի միանգամայն իրական զգացողության, «Տեսիլք» կատակերգական ֆիլմը, որի գլխավոր Շուրիկի դերում Դեմյանենկոն է խաղում: Հիշում եք, երբ նա քննություններին պատրաստվելիս փողոցում կոնսպեկտի փնտրուղների ժամանակ միացավ անծանոթ աղջկան և ընթերցանությամբ կլանված՝ չիմացավ, թե ինչպես ընկավ նրա բնակարանը: Իսկ հետո, նրա մոտ արդեն հյուր գալով՝ արդեն «գիտակից վիճակում գտնվելով», հանկարծ հիշեց, որ ինքն այդտեղ արդեն եղել է:

Հոլոգրաֆիական պատրանք

Ի՞նչ է, այնուամենայնիվ, թաքնված դեժա վյուի գաղտնիքի ետևում: Այդ մասին է պատմում Ռուսաստանի բարձրագույն հումանիտար հետազոտությունների ինստիտուտի աշխատակից, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Լեոնիդ Կարասևը: Ըստ նրա, շատ հետազոտողներ համարում են, որ դեժա վյուն առաջանում է գերհոգնածությունից, երբ ուղեղը մի տեսակ շեղվում է սխալմամբ անհայտն ընդունելով որպես հայտնի: Բայց իր՝ գիտնականի տեսակետը ավելի մոտ է «հոլոգրաֆիականին»:

Հոլոգրաֆիայի սկզբունքը ենթադրում է, որ ծավալային պատկերման յուրաքանչյուր կետ պարունակում է բավական ինֆորմացիա, որպեսզի նրա միջոցով վերաստեղծի ամբողջ պատկերը՝ անկախ այն բանից, թե որ անկյան տակ նրա վրա կընկնի հայացքը: Հնարավոր է, որ համաման եղանակով կառուցված լինի նաև այդ զարմանալի ֆենոմենը: Ուղեղում կոդավորված ձևով պահպանվում է գործնականում ամբողջ ինֆորմացիան, որի հետ հանդիպում ենք մենք կյանքում: Բայց այն ամենը, ինչ մենք տեսել և լսել ենք, շատ խոր է թաքնված մեր ենթագիտակցության

մեջ: Այդ ինֆորմացիան կարող է երևան գալ ընդամենը մի փոքրիկ մանրամասնի շնորհիվ: Ինչ-որ հոտ, ձայն, լուսավորություն, թռուցիկ հանդիպում նման որևէ բանի հետ կարող են մարդու մոտ այնպիսի պատրանք ստեղծել, որ համանման իրավիճակում ինքն արդեն եղել է, ասենք, 5 - 10 տարի առաջ: Թեև մանրամասն վերլուծության ժամանակ պարզվում է, որ շատ բաներ չեն համընկնում:

Դեժա վյուի զգացողությունը, այս կամ այն չափով, գրեթե բոլորին է ծանոթ, սակայն այն ավելի հաճախ անհանգստացնում է 17-ամյա անչափահասներին, ովքեր արդեն տպավորությունների նվազագույն պաշար են կուտակել և շատ սուր են արձագանքում կյանքի զանազան իրավիճակներին: Դեժա վյուի երկրորդ ալիքը երևան է զալիս 35-40 տարեկանում: Բայց այդ զգացողության մեջ արդեն չկա այն մաքուր ուրախությունը, որ առաջացել էր անչափահասության տարիքում, երբ զարմացում և ստեղծում էր առեղծվածային գաղտնիքներ: Քառասուն տարեկանում դեժա վյուն ավելի շատ թախիծ է հեռավոր անցյալի մասին: Իսկ մեթաֆիզիկներին, շատ նյարդայիններին և տպավորվողներին, կյանքի զգացողության սրման դեպքում, դեժա վյուն այցի է գալիս ողջ կյանքի ընթացքում և՛ շատ հաճախ:

Մադոննայի տարօրինակ զգացումը

Իր հարցազրույցներից մեկում անվանի երգչուհի Մադոննան պատմել է, որ երբ առաջին անգամ Պեկինում դիտել է կայսերական պալատը, իր մոտ այնպիսի զգացողություն է առաջացել, որ իրեն ծանոթ է այնտեղ ամեն ծակ ու ծուկ: Դա նրան առիթ է տվել հաստատելու, որ նա մանջուրական վերջին կայսեր ծառան է եղել: Անծանոթ իմացության տարօրինակ զգացումը ճաշակել է նաև Թինա Թյորոնը: Առաջին անգամ լինելով Եգիպտոսում, նա անսպասելիորեն տեսել է ծանոթ բնապատկերներ ու առարկաներ և հանկարծ «հիշել» է, որ փարավոնների ժամանակներում ինքը եղել է անվանի Հատշեպսուս թագուհու ընկերուհին կամ նույնիսկ հենց թագուհին: Իսկ «գործակալ 007» Շոն Քոններին վերջերս հայտարարել է, որ անցյալ կյանքում ինքը աֆրիկյան բնիկ մարտնչող ցեղերի բժիշկն է եղել:

Դրանք շատ արտասովոր վարկածներ են, որպեսզի կարելի լինի վստահել դրանց, մեկնաբանում է Կարասևը, բայց, օրինակ, այդ գաղափարը Քոններին զուլիսը կարող էր մտնել «Լավ մարդը Աֆրիկայում» ֆիլմի նկարահանումներից հետո, որտեղ նա հենց բժշկի դեր է խաղացել: Ինչ վերաբերում է Լև Նիկոլաևիչ Տոլստոյի հետ կատարված դեժա վյուի դեպքին, որը նա նկարագրում է իր մտերիմներից մեկին գրած նամակում (նա գրում է, որ

որսի ժամանակ, երբ ինքը հետապնդում էր նապաստակին, ծին գայթել է, և հեծյալը բռել է թամբից և ուժգնորեն խփվել գետնին: Այդ պահին նա պարզորոշ հիշել է, որ 200 տարի առաջ, լինելով բոլորովին այլ մարդ, նա նույն կերպ բռել է թամբից, ապա պետք է ասել, որ նա որսորդությամբ շատ էր զբաղվում, ծիով շատ էր շրջում և շատ էլ ընկնում էր: Եվ, ուրեմն, զարմանալի չէ, որ այդ դեպքերից մեկը նրան ներկայացել է որպես անսովոր իրավիճակ: Չէ որ դեժա վյուի պարադոքսը հենց այն է, որ նա հայտնվում է ոչ թե այն ժամանակ, երբ դուք ընկնում եք համապատասխան իրավիճակի մեջ, այլ երբ անծանոթ իրավիճակներում գաղտնաբար առկա են լինում ընդամենը մի քանի տարրեր, որոնք ձեզ ուղարկում են դեպի անցյալի իրավիճակներ:

Իսկ ինչ վերաբերում է դեժա վյուից վախենալուն, ավելացնում է Կարասևը, ապա չարժե նրանից վախենալ: Այն շատ երանելի և ռոմանտիկ զգացողություն է, որը մարդուն լավատեսություն է ներշնչում և ցույց տալիս, որ աշխարհը իր կառուցվածքով բարդ է և առեղծվածային...

Մասնագետի փնտսիչ

Ըստ ՌԴ բժշկական գիտությունների ակադեմիայի հոգեկան առողջության կենտրոնի տնօրեն Ալեքսանդր Տիգանովի, դեժա վյուի երևույթը ավելի մոտ է հիշողության խանգարմանը, այսինքն՝ հոգեխտաբանական մարզի հիշողության որոշակի խեղաթյուրմանը: Այն կարող է առաջանալ գործնականում առողջ մարդկանց մոտ: Բայց, այնուամենայնիվ, համանման երևույթ ունեցող յուրաքանչյուր մարդ պետք է հանգամանորեն հետազոտվի, որպեսզի համոզվի, որ իր ուղեղում չկան խտաբանական օջախներ: Չէ որ այդ անսովոր տպավորությունը կարող է որոշ դեպքերում վերաճել և հանգեցնել հիշողության կորստի, երբ անցյալը բոլորովին անհետանում է մարդու գիտակցությունից: Կամ, ընդհակառակը, խթան դառնալ զառանցանքի նմանվող հիվանդագին ֆանտազիաների, զգայախաբությունների կամ սևեռուն գաղափարների առաջացման համար:



ՄԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ



Հունիսի 23-30-ը Հայաստանում և Արցախում ՀՀ նախագահի բարձր հովանու ներքո կանցկացվի «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական մշակութային երկրորդ փառատոնը: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ այս տարի լրանում է նաև մեր երկրի անկախ պետականության 15-րդ տարեդարձը, փառատոնը լավագույն հնարավորություն է ընձեռում մայր հայրենիքում հավաքել աշխարհի տարբեր ծայրերում սփռված մեր հայրենակիցներին և ազգովին մշել այս կարևոր իրադարձությունը: Ուրախ կլինենք, եթե փառատոնին մասնակցելու և նրա մրջոցառումները

լուսաբանելու նպատակով այցելեք Հայաստան, որի համար անհրաժեշտ է մինչև մայիսի 10-ը հիմնադրամին ուղարկել հավատարմագրման հայտ և Ձեր գունավոր լուսանկարը 3x4 չափի կամ էլեկտրոնային տարբերակով՝ հետևյալ հասցեով՝ 375001 Երևան, Սարյան 22, 16-րդ հարկ, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի աշխատակազմ, հեռ: 53-72-43, 53-72-83, ֆաքս: 53-72-83, E-mail: mekazg@web.am, Web-site: www.mekazg.am

«Горцарар»
 Издаётся с июля 1999г.
АВТОР ПРОЕКТА-ВАГРАМ БЕКЧЯН
 Зам. гл. редактора - Роза ГУЛЯН
 Գլխ. խմբագրի տեղակալ՝ Ռոզա ՂՈՒԼՅԱՆ
ИЗДАТЕЛЬ
 Издательский Дом «ШАГАНЭ»
 Лицензия серия ИД № 02313
 Журнал зарегистрирован в Министерстве Российской Федерации по делам печати, телерадиовещания и средств массовых коммуникаций
Регистрационный номер ПИ № 77-5015
 Авторские материалы не рецензируются и не возвращаются. Переписку с читателями редакция не ведет. Мнение авторов может не совпадать с мнением редакции.
 Материалы со знаком **Ф** публикуются на правах рекламы.
 Редакция не несет ответственности за содержание рекламных объявлений.
ПЕРИОДИЧНОСТЬ ВЫХОДА - ЕЖЕМЕСЯЧНО
 Отпечатано ОАО «Калужская типография стандартов»
 Формат А3, объём 4,5 п.л. тираж 1500 экз. Зак. № 618
 Территория распространения: Российская Федерация, страны СНГ, зарубежные страны.
 В номере использованы материалы «АЗГ», «АРАВОТ», «ГА», «ЕТЕР», «ԻՎԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ», «ԻՐԱՎՈՒՆԿ», «ՉԻ», «ՆՈՎՈԵ ՎՐԵՄՅԱ», «ՎՕՅՆԻ».
Цена свободная.
Адрес редакции:
 248001, г. Калуга, ул. Суворова, 160.
 тел.: (4842)-56-59-29,
 E-Mail: gortsarar@mail.ru
 E-Mail: gortsarar@kaluga.ru
 факс: (4842) 565-929,
www.gortsarar.ru

E-Mail: bshahanev@kaluga.ru